

ՄԱՍԻՍ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

Ի. ՏԱՐԻ ԹԻՒ 15 (1365) ՇԱԲԱԾ, ՄԱՅԻՍ 3, 2008
VOLUME 28, NO. 15 (1365) SATURDAY, MAY 3, 2008



Պաշտօնաթերթ՝
Ա. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արևմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՍ
ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵ ՄՆԱԼ
«ՈՉ ԱԶԱՏ»

«Ֆրիտը Հառու» (Ազատութեան Տուն) իրաւապաշտպան հեղինակաւոր կազմակերպութիւնը Ապրիլ 29 հրապարակել է մամուլի ազատութեան 2008 թուականի գեկոցը: 2003 թուականին «ոչ ազատ» երկրի կարգավիճակի կը շարունակէ պահել Հայաստանը ստանալով նոյն բացասական գնահատականը, ինչպէս նախորդ տարիներուն:

Ձեկոյց կը յայտնէ, որ Հայաստանի Սահմանադրութիւնն ու օրէնքները կ'երաշխաւորեն մամուլի ազատութիւնը, սակայն գործնականին մէջ այդ իրաւունքները վտանգուած են. - «Բոնութիւնները, իրաւական հետապնդումները եւ ֆինանսական ճնշումները վնաս հասցուցած են մամուլի ազատութեանը»:

Նախորդ տարուայ գեկոյցին մէջ Հայաստան 64 միաւորով Զամպիայի հետ կը կիսէր 142-143-րդ տեղերը: Այս տարի Հայաստան Փղոսկրի Ափի, Կվինեայի, Մալդիվեան Հանրապետութեան, Մոլդովայի եւ Փաքիստանի հետ կը կիսէ 144-149-րդ տեղերը: Հայաստանի արձանագրած այս նահանջին նպաստած են անցեալ տարուայ խորհրդարանական ընտրութիւններուն վարչական լծակներ կիրառելու հանգամանք:

Ռ. ՅՈՎՐԱՆԻՍԻ ՍԵՐ ՓՈՐՁԱԾ Է ՄԻՋՆՈՐԴԵԼ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ԵՒ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՄԻՋԵՒ

Հայաստանի խորհրդարանին ներս միակ ընդդիմադիր ուժի՝ «Ժառանգութիւն» կուսակցութեան առաջնորդ Ռաֆֆի Յովհաննիսին առաջնորդական առաջնորդութիւն» ուստիուայանի հետ ունեցած հարցադրոյցի մը ընթացքին յայտարարած է թէ, իր քաղաքացիական պարտքը համարելով Սերժ Սարգսեան - Լեռն Տէր-Պետրոսեան համդիպում կազմակերպելը, սակայն այդ հանդիպումը ձախողած է, քանի որ կողմերը նախապայմաններ դրած են:

«Ես յորդորեցի, որ իրենք վեր կանգնեն իրավիճակի, պահի յուղականութիւնից հասկանալով, որ կայ ընդհանուր պատասխանատութեան խնդիրը, ուժ գտնելու դժմաց հանդիպել եւ հարցերը քննարկել», - ըսած է ան: - «Առաջին նախագահից նամակ ստացաւ ի պատասխան, թէեւ իր հետ բանաւոր զրոյցի ընթացքում հասկացել է, որ իրեն յուղում է քաղաքական դրդապատճառներով բանաւոր կուած քաղաքացիների պատասխանատութիւնը, իսկ գործող նախագահին հանդիպեցի յաջորդ օրը: Շիտակ խօսակցութիւն էր՝ քննա-

ԵՐԵՒՆԻ 93-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԹԻ ՏԱՍՆԵԱԿ ՀԱՅԱ ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐ ԾԻԾԵՌԱԿԱԲԵՐԴ ԲԱՐՁՐԱՑԱՆ ԼԵՒՆ ՏԵՐ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ԳԼԽԱՒՐՈՒԹԵԱՄ

Հայկական Յեղասպանութեան տարելիցի օրը՝ Ապրիլ 24-ին ուղիկանները դարձեալ փակած էին Ազատութեան Հրապարակը, սակայն տասնեակ հազարաւոր մարդիկ հաւաքուեցան հրապարակի մօտ, ուրկէ սկսաւ երթ դէպի Ծիծեռնակաբերդի յուշահամալիր: Առաջնորդութեամբ «Հանրապետութիւն» կուսակցութեան ղեկավար Արամ Սարգսեանի, Հայաստանի ժողովրդական Ստեփան Դեմիրճեան, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան ատենապետ Լիւդմիլա Սարգսեանի եւ այլ ընդդիմադիր քաղաքական գործիչներու, երթի մասնակիցները փակելով երթեւեկութիւնը անցան Բաղրամեան պողոտայով՝ Ազգային ժողովի եւ նախագահական պալատի առջեւէն, Օրբելի փողոցով մինչեւ Մարզամերգային Համալիր: Ամբողջ ճանապարհին կը լսուին վանկարկումները՝ «Սերժիկ, հեռացիր», «Ազատ, անկախ Հայաստան», «Լեւոն, Լեւոն»:

Երբ բազմութիւնը անցաւ կիեւեան կամուրջը եւ թեքուեցաւ դէպի Ծիծեռնակաբերդի բարձունք տանող ճանապարհին մկզբնաւորութիւնը ժողովուրդին միացաւ Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը: Բացա-



եղեռնի զոհերության մատուցեն ժողովրդային շարժումի դեկավաները. ախէն աջ՝ Ստեփան Դեմիրճեան, Լեւոն Տէր-Պետրոսեան, Արամ Սարգսեան, Լիւդմիլա Սարգսեան, Տիկ. Տէր-Պետրոսեան եւ ուրիշները

կանչութիւններն ու վանկարկումները դադրեցան եւ հաւաքուածները լուր բարձրացան դէպի յուշահամալիր:

Մէծ եղեռնի զոհերու լիշտակը լաւերժացնող յուշահամալիրին ծաղկեպսակ եւ ծաղկիկներ դնելով, բազմութիւնը շարժեցաւ Հրազդան մարզաշալատի ուղղութեամբ:

Լեւոն Տէր-Պետրոսեանին իր առանձնատան մօտ հրաժեշտ տուաւ երթի մասնակիցներուն եւ տիկնոջ հետ ուղղուեցաւ դէպի իր տունը:

Իսկ հաւաքուածները որոշ ժամանակ «Լեւոն» վանկարկելէ ետք աստիճանաբար հեռացան, Տար. էջ 4

ԵՐԵՒՆԻ ՏԱՐԵԼԻՑԻ ՆՇՈՒՄԸ ԼՈՍ ԱՆԵԼԸՆԻ ԵՒ ՆԻՒ ԵՌՐՔԻ ՄԵԶ



Հոլիվուտի «Փոքրիկ Հայաստան» շրջանին մէջ տեղի ունեցած երիտասարդական ցոյցը

Ամերիկահայութիւնը բազմաթիւ միջոցաւումներով եւ տարբեր բնոյթի հանդիսութիւններով ոգեկոչեց Հայկական Յեղասպանութեան 93-րդ տարելից:

ՈԳԵԿՈՉՈՒՄ
ԱԱԳՐԱՄԵՆԹՈՅՑԻ Մէջ
Ապրիլի 21ին Գալիֆորնիոյ մայրաքաղաք Սագրամենթոյի մէջ,

Նահանգային Մերակոյտի ժողովին (որ՝ Նահանգի Օրէնսդիր Բարձրագոյն Մարմինն է) առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան բացման աղօթքը կատարեց: Այս առթիւ իրեն ներկայացուեցաւ պաշտօնական յայտարարութիւն մը որ առաջարկուած էր ծերակուտա-

Տար. էջ 6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

«ԱՆԿԵԱԼՆԵՐԻ» ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

ի՞նչ կարելի է ասել կառավագարութեան նոր կազմի մասին։ Անմիջապէս աչքի է զարնում այն, որ այնտեղից հեռացուել են այն նախարարները, որոնք ընդդիմացել կամ բացասաբար են վերաբերուել Տիգրան Սարգսեանին Նշանակմանը։ Անդրանիկ Մանուկեանը, Հովհիկ Աբրահամեանը, Վարդան Խաչատրեանը։ Այն կարծիքն է տարածուած, թէ Տիգրան Սարգսեանն անցողիկ ֆիզուր է իշխանութեան վերնախաւում, բացի այն, որ բուն այդ վերնախաւ կոչուածն է անցողիկ, սակայն կառավարութեան նոր կազմը վկայում է, որ վարչապետն այնտեղից ժամկէտից շուտ չի հեռանաց։ Ժամկէտ ասուածը շատ է յարաբերական, որը ստեղծուած ներքաղաքական իրավիճակում կարող է «խմբագրուել» ցանկացած օր։ Այս պարագայում իրականութեանը մօտ չեն կանխատեսումները, որ մի Յ ամիս յետոյ Ռոբերդ Քոչարեանը վերադարձուելու է կառավարութիւն՝ վարչապետի պաշտօնով։ Ակնյացտ է, որ նոյնիսկ Սերժ Սարգսեանը նման մտադրութիւն չունի։ Սակայն չի կարելի չնկատել, որ կառավարութեան կազ-

Սերժ Սարգսեանն ընթանում
է միաբեւեր իշխանութիւն
ծեւաւորելու ուղիով,
եւ նրա նուիրական իղձն է
վաղ թէ ուշ վարչապետի
պաշտօնում նշանակել
հանրապետականի

մուժ Տիգրան Սարգսեանը սեփական երաշխաւորութեամբ միացն մէկ կալր է կարողացել խցկել: Դա ֆինանսների նախարար Տիգրան Դաւթեանն է: Հայաստանուժ աւանդոյթ կայ, որ Փինանսների նախարարը վարչապետի աջ ձեռքն է, նրա միջոցով վարչապետը կարողանուժ է բիւջէն «իրենով անել» եւ մշտապէս փող պահանջող միւս նախարարներին զցել կախման մէջ: Ֆինանսների նախկին նախարար Վարդան Խաչատրեանի եւ կԲ նախագահի միջեւ միշտ էլ լարուած յարաբերութիւններ են եղել, չնայած նրանք խուսափել են հրապարակային բանավէճերից, ինչպէս անուժ են այդ զերատեսնչութիւնների զեկավարները միւս երկրներուժ: Բացի Տիգրան Դաւթեանից, միւս բոլոր «սիրելի» նախարարների նշանակութները Տիգրան Սարգսեանի հետ կապ չունեն: Դա այնքան էլ զարմանալի չէ. որպէս տեխնոլոգատ վարչապետի՝ նրան երբեք հնարաւորութիւն չեն տայ սեփական քաղաքական թիմ ձեւաւորել:

Յաջորդ կարեւոր առանձնա-
յատկութիւնն այն է, որ կառավա-
րութեան կազմում նուազել է հան-
րապետական նախարարների թիւը:
Կարող է զարժանալի թուալ, սա-
կայն նախարարներից հանրապե-
տական են միայն Յը՝ Էներգետի-
կայի եւ բնական պաշարների նա-
խարար Արմէն Մովսիսեանը, ար-
դարադատութեան նախարար Գէ-
որդ Դանիէլեանը եւ բնապահա-
նութեան նախարար Արամ Յարու-
թիւնեանը: Ընդ որում, վերջին 2-
ը հանրապետական են դարձել միայն
նախարար դառնալուց իւտոյ: Սա-
կայն նշենք, որ հանրապետականի
քվոտացով նախարար է նշանակ-
ուել 7 մարդ: Նախորդ կառավա-
րութիւնում հանրապետականներն

Ա. ԱՐԱՄԵԱՆ
«ՏԻՐԾԻԳԻԾ»

ԱԽԱԼՆԵՐՆ ՈՒՐԻՇ ՏԵՂ ՓԱՏՏԵՔ

Դեռևս Փետրուարի 19-ից
առաջ՝ նախընտրական փուլում,
ուժիմն ամէն կերպ սիրաշահում
էր Երկրապահներին, նրանց ան-
ուանում «ազգի սերուցք» ու յոր-
դորում չփառնուել ներքաղաքա-
կան պայքարին: Աւելի ուշ, երբ
Երկրապահի ճնշող մեծամասու-
թիւնը կանգնեց Լեւոն Տէր-Պետ-
րոսեանի կողքին, նրանց «ազգի
սերուցք» լինելը մոռացուեց, ու
նրանք միանգամից դարձան «աս-
ֆալտի փիղալիներ» (Ազատութեան
հրապարակի շուրջօրեաց հանրա-
հաւաքների օրերին՝ նաեւ «թմրա-
մոլներ» ու «բոմթեր»): Ռոբերտ
Քոչարեանն ու Սերժ Սարգսեանն
էլ յայտարարեցին, թէ դեռ պէտք է
պարզել՝ այդ կառուցը պիտի շա-
րունակի՞ գոյութիւն ունենալ, թէ
ոչ: Իսկ ի՞նչ էր պատահել: Առանձ-
նապէս ոչինչ. պարզապէս բազմա-
թիւ երկրապահներ որոշել էին, որ
այլեւս չի կարելի կողքից նայել
Հայաստանի ներքաղաքական իրա-
դարձութիւններին, եւ յատակ քա-
ղաքական դիրքորոշում էին ար-
տայայտել:

Որքան էլ տարօրինակ է, բայց
այսօր նաեւ ընդդիմութեան շար-
քերից են տեսակէտներ հնչում, թէ
համաժողովրդական շարժման ղե-
կավարներն այնքան էլ ճիշդ չեն
արել, որ փորձել են ԵԿՄ ղեկավա-
րութեանը շարժման մասնակից
դարձնել, եւ ճիշդն այն կը լինէր,
եթէ այդ մարդիկ ընդհանրապէս
դուրս դրուէին քաղաքականութիւ-
նից: Այ քեզ բան... Երեւի իշխանա-
կան քարոզութիւնը սկսել է ազ-
դել: Նախ՝ որեւէ մէկն իրաւունք
չունի մի ուրիշին «քաղաքակա-
նութիւնից դուրս դնել»: Առաւել
եւս, որ այն, ինչ կատարուում էր
Հայաստանում Փետրուար-Մարտ
ամիսներին, դասական առումով ոչ
թէ ներքաղաքական պայքար էր,
այլ պայքար յանուն պետութեան
ապագայի, յանուն մարդկային ազա-
տութեան եւ անկախութեան փաս-
տացի պահպանման: Հետեւաբար
առաջին հերթին հենց երկրապահ-
ները պիտի լինէին շարժման առա-
ջին շարքերում, ու ամէն ինչ հենց
այդպէս էլ եղաւ: Եւ յետոյ իսկ ո՞վ
է ասել, որ, օրինակ, ջրագնդակի
կամ ֆուլ-կոնստակու կարատէի ֆե-
ղերացիաներն իրաւունք ունեն մաս-
նակցել քաղաքական գործընթացնե-
րին, իսկ երկրապահները՝ ոչ: Մինչ-
դեռ վերոցիշեալ կառուցցները լաւ էր
«ներքաշուել են» ու միահամուռ
ստարել են Սերժ Սարգսեանին:

Տեսակէտներ են արտայացտ-
ւում նաեւ, թէ միայն հանրահա-
ւաքներով «բան դուրս չի գայ»,
պէտք է պայքարի այլ ձեւեր եւս
գտնել, «արցին իրաւաքաղաքական
լուծումներ տալ, դիմել միջազգա-
յին աստեաններ եւ այլն: Այլո, ուեժի-
մը շատ կը ցանկանար, որ համա-
ժողովրդական շարժումը երկրորդ
պլան մղի հանրահաւաքային պայ-
քարը, աւարտուած համարի ընտ-
րական փուլը եւ սկսի թակել
միջազգային աստեանների դռները:
Այդ դէպքում նրանք թեթեւացած
շունչ կը քաշէին եւ կը համարէին,
որ ճգնաժամն անցել է:

Բայց փաստը մնում է փաստ,
որ այս ռեժիմը ոչնչից չի վախե-
նում, ոչ միջազգային ատեաննե-
րից, ոչ տնտեսական պատժամի-
ջոցներից, ոչ լիակատար մեկուսա-
ցումից: Ռեժիմը միայն ժողովր-
դից է վախենում, որովհետեւ ժո-
ղովրդին ոչ վախեցնել է հնարա-
ւոր, ոչ շանտաժի ենթարկել, ոչ
կաշուել, ոչ ջախջախել: Ռեժիմը

զիտակցում է, որ Եթէ ժողովուրդը
ուսքի ենի, յաղթական շարժումը
կասեցնել այլեւս հնարաւոր չե-
լինի: Իսկ «միջազգային քննար-
կումները» ռեժիմի համար փրկու-
թիւն կը լինեն, որովհետեւ ռեժիմը
ժամանակ կը շահի, ու գուցի նաեւ
հասցնի ներսից քայլայել համա-
ժողովրդական շարժումը, «ազգա-
յին հողի վրայ» պայքար սկսի ողջ
արտաքին աշխարհի դէմ եւ այլն:

Ինչեւէ: Որպէսպի այս թեմա-
ները հետագայ շահարկումների
առարկա չդառնան, յատակեցնենք:
Առաջին, ոեւէ մէկը երկրապահնե-
րին չի «ներքաշել» քաղաքական
պայքարի մէջ: Երկրապահները,
որպէս Հայաստանի Հանրապետու-
թեան լիարժէք քաղաքացիներ,
իրենք են միացել համաժողովրդա-
կան շարժմանը, շատ ճիշդ են
վարուել, եւ, որքան մեզ յայտնի է,
առ այսօր նրանցից ոեւէ մէկը դրա
համար չի փոշմանել: Երկրորդ.
համաժողովրդական շարժման պայ-
քարի հիմնական միջոցը շարունա-
կելու է մնալ հանրահաւաքը, եւ
հաւատացած եղեք՝ եթէ այդ պայ-
քարն աստիճանաբար հօրանայ,
միջազգային ատեաններն իրենք են
իրենց նախաձեռնութեամբ արձա-
գանքելու մեր պայքարին եւ ստեղծ-
ուած իրավիճակից իրաւաքաղա-
քական ելքեր վնտուելու: Իսկ յաղ-
թանակի դէպքում ռեժիմն ինքն է
ծեծելու միջազգային ատեանների
դռները՝ պահանջելով, որ իրենց
դատեն «քաղաքակիրթ աշխարհի
օրէնքներով»:

Եւ ընդհանրապէս, դասական
իմաստով քաղաքական պայքարը
Հայաստանում աւարտուել է 2007-
ի Մայիսի 12-ին, իսկ յաջորդ
փուլը՝ համազգային պայքարը,
սկսուել է 2007թ. Սեպտեմբերի 21-
ին: Եւ աւարտուելու է մօս ապա-
գայում՝ ժողովրդի յաղթանակով:
ԳՐԻԳՈՐ ՌԱԿԱՆԵԱՆ
«ԶՈՐՅՈՒԹՅՈՒՆ ԵՑԿԱՆՆ-ԶԻԹԵԿԻՆ»

«ԶՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

ՏԱՐԱԾՈՒՅԹ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՊԱՇՏՈՆԱՐԵՐԾՎ
ԽՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ԱՐԵԼՄԻՆԵԱԲ ԱՄԵՐԻԿԱՀ ՇՐՋԱԲԻ

ԽՍԲԱԳԻՐ

Տօքթ. Արշակ ԳԱԶԱՆՅԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ՍԱՀԱԿ ԹՈՒԹԵԱՆ
ՎԱԳԻՆ ԽՈՏԱՆԵԱՆ
ՑԱՀՈՒԹ ՏԵՂ ԿԱԼԵԹԻԱ,

31p (626) 797-7680

Ֆաք. (626)797- 6863

E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party of
Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, Canada \$60 (Second
Class), \$75.00 (Air Mail)

Class), \$75.00 (Air Mail)
Overseas \$85.00 (2nd Class Mail),
\$125.00 (Air Mail).

All payments must be made in

US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena, CA

Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104


ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՄԱՁՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ 2-ՐԴ ԿՈՆԳՐԵՍԸ ՄԱՅԻՍԻ 2-ԻՆ

ԵթեիԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»: Եթէ
ՀՀ իշխանութիւնները վերստին
մերժէին դահլիճ տրամադրել Հա-
մաժողովրդական շարժման 2-րդ
կոնգրեսը անցկացնելու համար,
արդէն կար որոշում՝ թէկուզ փոքր
խծըով այն Թբիլիսիում անցկաց-
նելու: Ինչպէս նշեց Լեւոն Տէր-
Պետրոսեանի կենտրոնական շտա-
բի անդամ Մանուչակ Պետրոսեա-
նը՝ իրենք եւ Լեւոն Տէր-Պետրոս-
եանին սատարող քաղաքական ու-
ժերը՝ ՀԺԿ, ՀՀԾ, բազմիցս դիմել
են մայրաքաղաքի տարբեր դահ-
լիճներ վարձելու համար: Բոլոր
դէպքերում էլ նրանց դիմումը
մերժուել է, որի նպատակն, ըստ
տիկին Պետրոսեանի, ակնյայտ քա-
ղաքական է:

Նրա պատմելով, երբ վերջնականապէս պայմանաւորուածութիւն էր ձեռք բերուել թբիլիսեան գործընկերների հետ, օրերից մի օր կառավարութիւնից տեղեկութիւն են ստանում այն մասին, որ իրենց դիմումը՝ փարձել կառավարութեան նիստերի դաշլիճը, բաւարարուել է եւ կարող են այն զբաղեցնել մի ամբողջ օր։ Սա, ըստ Մանուչակ Պետրոսեանի՝ խօսում է այն մասին, որ իշխանութիւնները հասկացել են, որ կոնգրեսը Հայաստանի սահմաններից դուրս անցկացնելը մեծ հարուած կարող է հասցնել իրենց հեղինակութեանը, եւ նրանք ճարահատեալ գնացել են այդ քայլին։ «Այլ տրամաբանական պատասխան, քան Թբիլիսիում կոնգրեսն անցկացնելու հետանկարը, չէր կարող հիմք ծառացել իշխանութիւնների այդ քայլին, քանի որ մեր մօտ 50 դիմումները մերժում էին անընդհատ։ Իշխանութիւնները նաեւ լաւ գիտակցում էին, որ Թբիլիսիում կոնգրեսն անցկացնելն աւելի մեծ հնչեղութիւն կ'առանար», - լրագրողների հետ հանդիպման ժամանակ այսօր նշեց Մանուչակ Պետրոսեանը։

Այս կոնգրեսի ժամանակ, նրա
փոխանցմամբ՝ ամփոփուելու են
Համաժողովրդական Շարժման
կենտրոնի գործունէութիւնը՝ ՀՀ
Նախագահի ընտրութիւններից
առաջ եւ յետոց, Մարտի 1-ի իրա-
դարձութիւններն ու նրա թողած
հետեւանքները։ Կոնգրեսի ժամա-
նակ նաեւ այս ամէինին կը տրուի
քաղաքական գնահատականներ։
Ներկայ կը լինեն 20-ից աւելի
քաղաքական կուսակցութիւններ եւ
մօտ այդքան էլ ՀԿ-եր, որոնց
կազմը՝ ըստ Պետրոսեանի՝ դեկ-
տեմբերին կայացած առաջին կոնգ-
րեսի համեմատութեամբ ոչ թէ
նուազել է, այլ ընդհակառակը՝
ընդլայնուել։



Լեւոն Տէր-Պետրոսեանի
կենտրոնական շտարի անդամ
Մանուչար Պետրոսեան

Մանուշակ Պետրոսեանն անդ-
րադարձաւ նաեւ Երեւանի քաղա-
քապետարանին ներկայացրած հան-
րահաւաքներ, երթեր անցկացնելու
իրենց բազմաթիւ իրազեկումնե-
րին, որոնք անհիմն ձեւով միշտ
մերժուել են: Իրազեկումներ են
նեկայացրել նաեւ Լեռոն Տէր-Պետ-
րոսեանին սատարող քաղաքական
ուժերը՝ մօտ 26 դիմում, որոնք եւս
մերժուել են: Ամենազատեշտալին,
ըստ Պետրոսեանի, ՍԴՀԿ-ի՝ Մայի-
սի 1-ին երթ անցկացնելու մասին
իրազեկման մերժումն էր: «ՍԴՀԿ-
ն իր բնոյթով սոցիալիստական
կուսակցութիւն է, իսկ Մայիսի 1-
ը աշխատաւորների միջազգային
օրն է: Թէեւ մերժման պատճառնե-
րը ձեւականօրէն են անհասկանալի:
Իրականում իշխանութիւնները
խուսափում են, տագնապում են
համաժողովրդական հզօր երթե-
րից:», - ընդգծեց տիկին Պետրոս-
եանը:

Վարչական դատարանները
ներկայացուած շատ դիմումների
դէպքում քաղաքապետարանի մեր-
ժուածներն ուժի մէջ են թողել: Այդ
իսկ պատճառով համաժողովրդա-
կան շարժման կենտրոնը որոշել է
դիմել Սահմանադրական Դատա-
րան, այնուհետեւ՝ Եւրադատարան:
Շարժման կենտրոնի իրաւաբան
Ռոբերդ Սանոեանը քաղաքապե-
տարանի մէրժուածները որակեց
չիմնաւորուած եւ չանհատակա-
նացուած, որոնց դէպքում քաղա-
քապետարանը լուս է կատարել
չակերտաւոր եզրակացութիւնների
վրայ՝ դրանով իսկ կատարելով
բազմաթիւ խախտուածներ: Համա-
ժողովրդական շարժման 2-րդ կոնգ-
րեսը կը կայանայ Մայիսի 2-ին,
ժամը 12-ին Կառավարութեան նիս-
տերի դահլիճում:

4 ՀԱՅԱՍՏԱՆԻՆԵՐ ՅԱՅՏՆՈՒՅՆԵԼ ԵՆ ՆԱԽԻՋԵՒԱՆՈՒՄ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՈՎԱՏԻՈՅ»: Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան վկայութեամբ՝⁴ հայաստանցիներ մզոլորուել եւ յայտնուել են Նախիջեւանում:

Հստանախարարութեան այսօրուայ հաղորդագրութեան՝ Նորագործի բնակիչներ Արտցոմ Զոհրաբեանը, Կարէն Թորոսեանը, Աղասի Ենոքեանը եւ գաւառցի Վանիկ Զմբոեանը «գնացել են Խաչիկ փլւղում տեղակայուած զինաւան՝ իրենց զինծառացող ընկերոջ հետ տեսակցութեան, այնուհետեւ վերադառնալիս կորցրել են ճանապարհը եւ, հաւանաբար, անցել Նախիջեւանի կողմ։»:

Նախարարութեան տուեալներով՝ հայստանցիները գտնւում են Աստրպէցանի անվտանգութեան մարմինների մօտ, նրանց առողջական վիճակը նորմալ է:

Հայկական կողմը դիմել է Կարմիր Խաչի միջազգային գրասենեակ՝ Բաքուի համապատասխան գրասենեակի հետ հայաստանցիների վերադարձը կազմակերպելու նպատակով։

ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԸ ՄԵՐԺԵԼ Է ՍԴՅԿ-Ի ԴԻՄՈՒՄԸ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԼ»: «Հայաստանում իրականում աշխատող մարդկան շատ քիչ են, դժբախտաբար բայց կարծում եմ, որ Մայիսի 1-ին շատերը հաճուքով դուրս կը գալին ու կը խօսէին իրենց խնդիրների մասին: Խօսքը իշխանափոխութեան մասին չէ, ինչպէս փորձում են մեռացնալ վերապրել, այլ ընդհանրապէս սոցիալական խնդիրների մասին: Զէ՞՞ որ դա այն օրն էր, երբ հիմնականում բանուոր դասակարգն էր դուրս գալիս փողոց «-, -Ա+»: Ի հետ զրոյցում ասաց ՍԴՀ ատենապետ Լիւդմիլա Սարգսեանը Սական Երեւանի քաղաքապետարանը թոյլ չի տուել Մայիսի 1-ին երթ անցկացնել:

Հիւղմիլա Սարգսեանն ասուա
էր, որ իրենք սոցիալիստական ուղղ
ուածութեան կուսակցութիւնն են
ուստի աշխատաւորութեան համաշշ
խարհային տօնին նման երթ անց-
կանելն իրենց իրաւունքն է, ինչպէ-
նաեւ պարտաւորութիւնը։ Տիկին
Սարգսեանն անձամբ կողմ էր փողոց
դուրս գալուն, թէկուզ մերժուած
վինելու պարագայում, բայց կար-
ծում է, որ իրենք իրաւունք չունեն

ՍԵՐԺ ԱՐԴԻՇԵԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ է
ՍՏԵՂՋԵԼ ԵԽԵՎ-Ի ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

«Ա.ԶԱ.ՏՈՒԹԻՒՆ ՌԱ.ՏԻՈՅ»
Սերժ Սարգսեանի կարգադրութեածք ստեղծուելէ աշխատանքային խումբը՝ Եւրոպայի Խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի Հայաստանի ժողովրդավարական հաստատութիւնների գործունէութեանը վերաբերող բանաձեւուածքով առաջարկութիւնների իրագործման համակարգման նպատակով։ Խումբը զեկավարելու է նախագահի աշխատակազմի ղեկավար Հովհաննելիկ Աբրահամեանը։

Խօմբի կազմում ընդգրկուած են ԵԽԽՎ-ում Հայաստանի պատուիրակութեան անդամները, նախագահի օգնականը, արտաքին գործերի, արդարադատութեան փոխնախարարները, գլխաւոր դատախազի տեղակալը, Հանրային հեռուստառադիտութիւնը և նախագահը ու Հեռուստատեսութեան ներառությունը ազգային լանձնաժողովի նախագահը և այլ պահանջման առաջարկությունները».

ՀԱՄԱՁՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ ԴԻՄԵԼՈՒ Է ԵՒՐԱԴԱՏԱՐԱՆ

Համաժողովրդական Շարժման կենտրոնը որոշել է հայց ներկայացնել Մարդու իրաւունքների եւրոպական Դատարան:

Հստ Համաժողովրդական Շարժման կենտրոնի տարածած հաղորդագրութեան, որոշուել է «Նախապատրաստել հայց Եւրադատարան, որով կը բողոքարկուեն 2008 թուականի ֆետրուարի 19-ի նախազահական ընտրութիւնների արդիւնքների կեղծման հետ կապուած Զայտանի Հանրապետութեան պետական մարմինների կողմից կատարուած իրաւախախտումները»:

«Հայցի նախապատրաստման համար ստեղծուել է փորձագիտների աշխատանքային խումբ Հայաստանի եւ օտարերկրեայ իրաւաբանների մասնակցութեամբ», - տեղեկացնում է հաղորդագրութիւնը:

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԸ ԴԻՄԵԼ ԵՆ ՍՓիտոքազութեանը

Շիրակի մարզի ազատամարտիկներն կոչ են արել սփիւռքահայութեանը՝ ներազգել Հայաստանի իշխանութիւնների վրայ կալանաւորուած ազատամարտիկներին ազատ արձակելու համար:

«Իրենց քաղաքական հայեացքների համար անհիմն մեղադրանքներով այսօր բանտերում են գտնուում Արցախեան Հերոսամարտի մասնակիցներ, հրամանատարներ Աշոտ Զաքարեանը, Մուշեղ Սաղաթէլեանը, ազատամարտիկներ Յարութիւն Ռւռութեանը եւ Գէորգ Ղազարեանը», - ասուած է Շիրակի մարզի ազատամարտիկների դիմումում:

Նրանք յորդորել են սփիւռքահայերին «բարձրացնել իրենց բողոքի ձայնը եւ ունեցած բոլոր հնարաւորութիւններով ներգործել Հայաստանի իշխանութիւնների կրավ»:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՄՈՔՐԱԹԵՏՐԸ «ԴԺՈՒԱՐՈՒԹԵԱՆ» ՄԵԶ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂՐԵԱՆ

Ամերիկեան նախագահական ընտրութիւններուն հետեւողին, նոյնիսկ հապանցիկ կերպով, յայտնի է թէ ի՞նչ է կացութիւնը ներկայիս, յատկապէս Տեմոքքրաթ կուսակցութենա երկու թեկնածուներու նկատմամբ: Սկզբնական շրջանի 8-10 թեկնածուներէն, ժամանակի ընթացքին տեղի ունեցած զոտումի եւ հրաժարումներու պատճառաւ, հրապարակի վրայ մնացին երկուքը, մէկը երկրի նախկին նախագահ Պիլ Քլինթընի կինը, Հիլլրի Քլինթընի, որ միեւնոյն ատեն Գոնկրեսէն ներս Նիւ Եորք նահանգի սենաթըը է, իսկ երկրորդը՝ Պարաք Օպաման որ իլլինոյ նահանգի սենաթըը է: Հիլլրիի պարագային, թէ իբրեւ նկարագիր, եւ թէ իբրեւ փորձառութիւն, առկունութեան եւ վաստակի դրամագլուխի մը մասին յաճախ կը խօսուի, եւ յայս պատճառներով, ան ինքինք «նախընտրելի» թեկնածուն կը նկատէ Նոյեմբերի ամսուն տեղի ունենալիք ընտրութեանց ընթացքին: Այս հանգամանքը յատկապէս կը շեշտուի իր «ընտրելի» ըլլալու (electable) նկատումով: Այս պարագան լուրջի առնուած է Հիլլրիի կողմնակիցներու կողմէ, թէ տեմոքքրաթ կուսակցութեան որոշ պատասխանատուներու, եւ թէ մանաւանդ Հիլլրիի ընտրական համակիրներու կողմէ: Այս վերջիններու շարքին էր, օրինակի համար, Փենսիլվանիա նահանգին մէջ Հիլլրիի ի նպաստ քուէարկեցին իր ամենէն հաւատարիմ ընտրողները, տարիքաւոր կիները, միջին դասու (blue collar) աշխատաւորները, եւ յատկապէս, կաթոլիկ համայնքի պատկանողներու 70 տոկոսը: Այս համայնքը զօրացած էր նոյն շրջանին Հոռովմի պապին այցելութեամբ: Հիլլրի, իր մըցակից Պարաք Օպամացի վրայ նշանակելի յաղթանակ մը տարաւ Փենսիլվանիա նահանգի մէջ, շուրջ 10 կէտերով ընտրողներու առաւելութեամբ: Զակառակ իր յայ յաղթանակին սակայն, Հիլլրի Քլինթըն տակաւին հարիւրէ աւելի իրեն ի նպաստ քուէարկողներու մօտ ժխտական պակաս մը ունի, եւ ընտրութեանց իրազեկ մարդիկ կը նախատեսն որ, նոյնիսկ գալիք 7-8 նախնական ընտրութեանց մէջ յաղթանակ տանելու պարագային, ինչ որ շատ կասկածելի կը թուի, Հիլլրին անկարող պիտի ըլլայ նշանակուիլ իբրեւ իր կուսակցութեան, տեմոքքրաթներու թեկնածուն, հանրապետական թեկնածու, ձոն Մքքէնի դէմ ելլելու համար: Թէեւ մտածողներ կան որոնք Հիլլրին աւելի հաւանականութիւն ունի Մքքէնի դէմ յաղթական ելլելու քան Օպաման: Այս միայն ոմանց կարծիքն է, տրուած ըլլալով Քլինթըններու երկար տասնամեակներու քաղաքական դրամագլուխը: Ներկայիս այս է Հիլլրիի կողմնակից շրջանակներու տրամադրութիւնը, այսինքն, մարտունակ եւ չյուսահատող, հակառակ անոր որ իրեն կողմնակից կուսակցական քուէարկողներու (delegate) թիւը կը մնայ բաւականին պակաս, անհրաժեշտ 2025 թիւէն:

Այժմ կը հասնիմ միւս թեկ-
նածուին՝ Պարաք Օպամային, որուն
սկզբնական խոյանքը ընտրողնե-
րու մօտ զինք հասցուցին իր կու-
սակցութեան երկու թեկնածունե-

ექნ მცხილუ հանգամանքին: Օպա-
ման յարաբերաբար მիայն 3-4
տարիներու փորձառութիւն მը ու-
նի Գոնկրէսէխն ներս, որուն համար
կ' ամքաստանուի «անփորձ» ըլլա-
լու յանցանքով, եւ սակայն, վերջին
քանի մը շաբաթներու ընթացքին,
իր ընտրարշաւը ունեցաւ կարգ մը
լուրջ «սխալներ» որոնց համար
իր թեկնածութիւնը ներկայիս լուրջ
դժուարութեանց կը հանդիպի: Այս
դժուարութիւնները բոլորին ծա-
նօթ են հիմք, սկսելով իր եկեղեց-
ւոյ, եւ իր անձնական բարեկամ,
վեր. Ճիրիմի Ռայթի կրքու ար-
տայալութիւններէն, մանաւանդ
այս երկրին, Ամերիկայի համար
աննպաստ նկատուած, որոնց ըն-
թացքին Ռայթ կը քննադատէր
կառավարութիւնը, Պուչը, սպի-
տակ ցեղային մտածողները, սեւ
համայնքի նկատմամբ «Ժխտա-
կան» քայլերը եւ նման արտայա-
տութիւններ, որոնք Օպամայի հա-
կադրուող աջակողմեան, հանրա-
պետական մտածողներու կղմէ, լա-
ւապէս օգտագործուեցան իրեն դէմ,
եւ որոնց հանդէպ իր տուած տեղե-
կութիւնները պէտք եղած լուսա-
բանութիւնները չկրցան տալ: Այս
շրջանակները առտու-իրիկուն,
իրենց ենթակայ կայաններէն երա-
նելի պատուելիին խօսքերը ժողո-
վուրդին կը փոխանցեն, Օպամայի
դէմ արամադրութիւն ստեղծելու
համար, եւ կը յաջողին որոշ
չափով: Նաեւ, բացի այս պատ-
ուելիին, Օպաման խնդրայարուց
արտայալութիւններ ունեցաւ,
յատկապէս Սան Ֆրանսիսկոյի մէջ,
ուր նկարագրելով ընտրողներու
արամադրութիւնը, կը շեշտէր թէ
այդ ընտրողները զէնքի եւ կրօնքի
կը դիմէին իրենց «բարկութիւնը»
(bitterness) արտայատելու հա-
մար: Գլխաւորաբար այս երկու
«սխալներու» պատճառաւ Օպա-
մայի թեկնածութիւնը որոշ տեղ-
քայլ արձանագրեց: Այս տեղքայլը
սակայն, ըստ դիտողներու, լուրջ
վնաս չեերաւ Օպամայի թեկնա-
ծութեան, որ տակաւին կը մնար



առաջին շարքին, Հելլըրիի հետ
համեմատած: Կայ տակաւին ուրիշ
պարագայ մը եւս: Նախքան ֆեն-
սիլվանիա ընտրութիւնը, Հելլըրիի
եւ Օպամա, հրապարակային վիճա-
բանութիւն-ելոյթ մը ունեցան, որ
իբրև «debate» կը ճանչցուի, որու
ընթացքին Օպաման աւելի «տկար»
դուրս եկաւ քան Հելլըրին, երեւոյթ
որուն վրայ հիմնուելով Հելլըրի կը
պահանջէ անգամ մը եւս «debate»:
- վիճաբանութիւն մը ունենալ
Օպամային հետ, առանց միջնոր-
դի, եւ սակայն Օպամա կը մերժէ
ընդառաջել: Այս եւս Քիլնթընի
կողմէ «տկարութիւն» կամ «վախ»
կը նկատուի, եւ կը շահագործուի
Օպամային դէմ:

Ներկայիս կացութիւնը հետեւեալն է:

Հանրապետականներու թեկ-
նածուն ձո՞ն Մքքէյն բաւականին
հանդարս ընտրապայքար մը կը
մղէ, եւ սակացն, եթէ ընտրուի,
մարդիկ կ'ըսեն թէ Պուշի Յրդ
իշխանութեան շրջանը պիտի ըլ-
լայ, այսինքն Պուշ եւ Մքքէյն
գրեթէ նոյն քաղաքական ուղեգիծ-
ները որդեգրած են, որքան ալ
տարբեր երեւին մանրամասնու-
թիւններու մէջ: Մքքէյն նոյնիսկ
արտասահմանեան որոշ երկիրներ
լուրջ հանդիպումներ կ'ունենաց
հաւանօրէն ինքզինք յաջորդ նա-
խագահ ներկայացնելով:

Տեմոքրաթիւնը պարագային, կացութիւնը բաւականին պղտոր է, իսկ եթէ մնայ այսպէս մինչեւ Յունիսի վերջը, այսինքն եթէ կուսակցութիւնը չկարենայ իր միակ թեկնածուն նշանակել Նոյեմբերի ընտրութեանց, վախ կայ որ կուսակցութեան լաղթանակի լուրջ կարելիութիւնները կրնան վտանգուիլ: Թէեւ ներկայիս Պարաք Օպաման աւելի ունի հաւաքած «delegate»ներ, սական անհրաժեշտ 2025-ի դժուար թէ կարենայ հասնիլ: Նոյնն է պարագան Հիլլըրի Քլինթընի: Եթէ այս կացութիւնը շարունակուի առանց մէկուն հրաժարելուն ի նպաստ միւսին, կուսակցութիւնը Օգոստոս ամսուն իր համագումարին կ'երթայ զրեթէ բաժնուած, եւ կը մնայ «super delegate» ճանչուած խումբին, նշանակելու թիւ մէկ թեկնածուն, Քլինթըն կամ Օպամա: Վտանգաւոր պարագայ կը նկատուի այս մէկը քանի որ կորմնցնող թեկնածուին կողմանակիցները կրնան չմասնակցիլ ընտրութեանց, եւ յաղթանակը ձգել հանրապետականներու թեկնածուին՝ Մքքեյնին: Ափսոս պիտի ըլլայ այս պարագային, քանի որ տեմոքրաթիւնները լուրջ տուեալներ ունին այս ընտրութեանց ընթացքին, յաղթանակ շահելու եւ ուրեմն փոխելու Ամերիկայի ամբողջ քաղաքական կեանքը...

ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

ԼՈՍ ԱՆՑԵԼՈՍԻ ՀԱՅ ՔՈՅՉՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆ ԱՊՐԻԼԵԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄ

ԼԻՆՏԱ.ԳԱՆՏԻԼԵԱՆ

իրենց առօրեային:

Արդէն իսկ Ապրիլ ամիսն է... հնչակս աշխարհի բոլոր հայկական գաղութները՝ ափիւռք թէ հայրենիք, նոյնպէս հայ վարժարանները՝ լծուած են հայկական ցեղասպանութեան ոգեկոչման ծրագիրներու իրականացման գործընթացին:

Ամէն տարուան նման, այս տարի եւս Հայ Քոյրերու Վարժարանի բոլոր դասարանները սորվեցան մէծ Եղեռնի նուիրուած ուսանաւորներ, կարդացին 1915 թուականը նկարագրող Պատմական յօդուածներ, վերապահներու եւ ականատեսներու վկայութիւններ, ապա դիտեցին Եղեռնի նուիրուած վաւերագրական ժապաւէններ, քննարկեցին եւ ամփոփեցին զանոնք, առաւել այս բոլորին բարձրագոյն դասարաններու աշակերտները իրականացուցին առիթը արտայտող ծրագիրներ, ինչպէս՝ ցեղասպանութեան նուիրուած յուշարձաններու մանրակերտները պատրաստել, պահանջուած հողե-

ԱՊՐԻԼ 23 Ս. ՊԱՏԱՐԱԳ
Ապրիլ 23ի առաւոտեան արդէն դպրոցի շրջափակը զետեղուած էր Միծեռնակաբերդի մանրակերտը, ամէն կողմէ մեղմ ձայնով կը լսուէր Տէր Ողորմիան, կարծես նահատակներու նոգիները կը թեւածէին Հայ Քոյրերու Վարժարանի երկնակամարին վրայ... Ժամը ինին, բոլոր աշակերտները հաւաքուած էին սրահը ներկայ գտնուելու Ս. Պատարագին: Պատարագի Հայր Անտոն Վրդ. Սարոյեան իր ացդ օրուան քարոզին մէջ յորդորեց աշակերտները առաջնորդուելու նահատակներու ուղիով, միշտ հապարտ զգալու հայութեած եւ ունենալու պատկանելիութեան գիտակցութիւնը:

ԾԱՂԻԿՆԵՐՈՒ ԶԵՏԵՂՈՒՄ
Յետ պատարագի աշակերտները, սկսեալ մանրակամատուրի մանուկներէն մինչեւ ութերորդ դասարանի պատանինիները, լուռ քալե-



Իր պատկանելիութեան գիտակից եւ իրաւունքներուն տէր նոր սերունդը

յու աշխարհագրական դիրքը ցուցադրող քարտէմաններ գծել, արեւմտահայաստանի եկեղեցիներուն ու պատմական վայրերու մասին տեղեկութիւններ հաւաքել եւ բողոքի պաստառներ պատրաստել, տակաւին նահատակ գրողներու մասին ուսումնասիրութիւններ ընել: Յատկանշական աշխատանք էր ութերորդ դասարանի կատարած ըլ՝ արմատներու փնտութուքը: Անոնք իրենց մէծ մայրերը ու հայրերը հարցուափորձելով փորձեցին հասնիլ իրենց արմատներուն եւ ապշեցուցիչ արդիւնքներուն:

յին յուշարձանին շուրջը եւ իրենց սուներէն բերուած ծաղիկները զետեղեցին հոն՝ ցուցաբերելով յարգանք մէկ ու կէս միլիոն զոհերու յիշատակին, իսկ երկրորդ դասարանի աշակերտներ իրենց պատրաստած բողոքի ցուցատախտակներով քալեցին բակին շուրջ արտայալուով իրենց զայրոյթն ու պատամբութիւնը անարդարութեան դէմ: Հայր Անտոն Վրդ. Սարոյեան, հոգեհանգստեան պաշտօն կատարեց բոլոր անթաղ մեռներու հոգիներուն համար, աշակերտները երգեցին «Հանգչեցէք դուք անդորր» նահատակներու նուիրուած շարականը:

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵՆԱԿ
ՈԳԵԿՈՉՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ
Յեղասպանութեան 93րդ տարեգարձը նշող ոգեկոչումը տեղի ունեցաւ պաշտօնական հանդիսութեամբ մը Ապրիլ, 23ի յետմիջօրէին, ուր բացման խօսքով հանդէս եկաւ բարձրագոյն դասարաններու հայերէն լեզուի դասատու՝ Տիկ. Լինտա Գանտիլեան: Ան իր խօսքը սկսաւ հարցադրելով թէ՝ ինչո՞ւ Ամերիկա կ'ապրինք, - ուրկէ՞ եկած են մեր ծնողները եւ մէծ հայրեր... ապա զուգահեռ մը գծելով հայ ժողովուրդի եւ արագիլի միջեւ, ան խօսքը ուղղելով աշակերտներուն ըսաւ «...մեր բոյնը հազար անգամ աւերուած եւ կրկին նորոգուած է, ինչպէս արագիլինը, շարդ-

ԱՅՑ ՄՈՆԹԵՊԵԼԼՈ ՅՈՒՆԻՄԱՐՁԱՆ

Այսակիտով Հայ Քոյրերու Վարժարաններս, Ապրիլեան նահատակներու յիշատակը վերականգնող եւ անոնց հոգիներուն իրենց յարգանքի ստուգը մատուցող գործունէութիւններու շարքին առաջինը հանդիսացաւ Ապրիլ 22ին Ութերորդ դասարանի աշակերտներու ացը Մոնթեպելլոյի Եղեռնի նուիրուած յուշարձանին, ուր աշակերտները իրենց սորված արտասանութիւններով, երգերով եւ շարականներով պահ մը նահատակներուն հոգիներուն հետ հաղորդուեցան, մոմ վառեցին եւ խունկ ծինեցին, ապա իրենց վարժարանի կողմէ խաչըռու մը գետեղելով անոնց յիշատակին, վերադարձան

Շար.Բ էջ 4

ԿՈՄԻՏԱՑ ՀԻՄՆԱԿՐԿԵՆ ԱՐԱ ՍԱՐԱՖԵԱՆ ԿԸ ՀԻՒՌՈՆԿԱԼՈՒԻ Հ.Բ.Ը.Ը.-Ի ՎՍՊԵՏՆԵՐՈՒ ՀԱՍԱԽՄԲՈՒՄԻՆ ԿՈՂՄ

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Ասպետներու Համախմբումը կազմակերպած է յասուկ երեկոյ մը Արա Սարաֆեանի հետ, Մայիս 9, 2008ի երեկոյեան ժամը 8:00-ին, Հ.Բ.Ը.Ը.-Ի Մանուկեան-Տէմիրճեան վարժարաններս, կրելով «Հայոց Յեղասպանութեան լուութեան Դատապարտուած Զայները» խորագիրը:

Արա Սարաֆեան արխիւներ կ'ուսումնասիրէ մասնագիտանալով Օսմանեան շրջանի վերջին եւ Հայոց Պատմութեան նորագոյն շրջաններուն վրայ: Ան նաեւ գործադիր տնօրէնն է Լուսունի մէջ գործող Կոմիտաս Հիմնարկն: Ան ուսումնասիրած է ամերիկան, բրիտանական, հայկական եւ թրքական արխիւներ և թորուած մասնագիտները:

Սարաֆեանի համաձայն, տարիներու ընթացքին տեղի ունեցող Յեղասպանութեան ինդրիին բեւեռացումը, յատկապէս թուրք կառավարութեան ուրացումը 1915-ի Եղեռնութեան, արգելք հանդիսացած էն վաւերական հարցուածներ բարձրացնելու 1915-ի մասին: Նոյնիսկ աւագ պատմաբաններ խուսափած են կարգ մը հարցերէ եւ բանալի ալբիւրներէ, որոնք կը տարբերին ցեղասպանութեան մասին եղող աւանդական հակացողութիւններէն:

Իր դասախոսութեան ընթացքին, Արա Սարաֆեան պիտի ներկայացնէ կարգ է Եղեռնին նուիրուած շարք մը ծրագիրներ, անոնց մէջ ներդրաւելով թուրք մասնագիտները:



Յատկապէս, ան կ'ուսումնասիրէ ճակատագիրը այն հայերուն, որոնք չաքտորուեցան դէպի Տէր-Զօր (ուր անոնք տարուեցան ու կոտորուեցան 1915-16-ին), այլ՝ տեղահանուելի ետք հասան արեւմտեան Սուրիա եւ Յորդանան, ուր մէծ մասամբ ողջ մասացին: Ինչպէս կարելի դարձաւ այդքան մարդու վերապրումը, երբ նոյն ատեն շատ աւելի մէծ թիւ մը ջարդուեցաւ եւ մահացաւ Տէր-Զօրի մէջ: Ինչպէս ամսոնք վերապրեցան: Սարաֆեանի համաձայն, թոյլ տալով նման հարցադրումներով մօտենալ Յեղասպանութեան ինդիրիին, ոչ միան կը մդէ որ աւելի ճիշդ հասկացողութիւն ցուցաբերուի այս հարցին նկատմամբ, այլ՝ կ'արգիլէ Յեղասպանութիւնը դրժողները շահագործելիք «յուութեան դատապարտուած աղբիւրին աղմար» աղբիւրին էլեկտրոնային համար կը խնդրում էնել:

Քննարկումը պիտի կատարուի անգերէն եւ հայերէն լեզուներով: Կը ինդրուի ներկայ գտնուկ Մայիս 9, 2008-ին Հ.Բ.Ը.Ը.-Ի Մանուկեան-Տէմիրճեան վարժարանի Աղամանեան սրահ՝ մասնակցելու այս շատարական դասախոսութիւն-քննարկումին: Սուտաքը ազատ է աւարտին: Հիւրասիրութիւնն: Յաւելեալ տեղեկութիւններու համաձայն, թոյլ տալով նման հարցադրումներով: «Յեղասպանութիւնը աղբիւրը» աղբիւրին աղմար կը խնդրուի հեռա-ձայնել՝ (626) 794-7942 թիւին:

*In 1915, a terrible secret was buried...
Almost a century later,
it is about to be uncovered.*

One man makes an unforgettable journey
into the shadows of his family's past...
in the hopes of saving his own future.

KATHLEEN CHALFANT

RED DOG HOWLS
MATTHEW RAUCH DARCIE SICILIANO

A NEW PLAY BY DRAMA DESK NOMINEE
ALEXANDER DINELARIS

Original Music Composed

& Performed by

ARA DABANDJIAN

Directed by

MICHAEL PERETZIAN

LIMITED ENGAGEMENT

MAY 14TH - JUNE 13TH

PERFORMANCES

MAY 14TH - JUNE 13TH

For e-tickets go to

www.reddoghowls.com

El Portal Theatre

5269 Lankershim Blvd.

North Hollywood

BOX OFFICE 818.508.4200

www.elportaltheatre.com

massis Weekly

Volume 28, No. 15

Saturday, MAY 3, 2008

Armenia Marks Genocide Anniversary



Opposition supporters at the Genocide Memorial

YEREVAN -- Hundreds of thousands of people silently marched to the hilltop genocide memorial in Yerevan on Thursday to pay their respects to more than one million Armenians massacred in Ottoman Turkey from 1915-1918.

An incessant stream of people of different ages walked up to the Tsitsernakabert hill overlooking the city and laid flowers around its eternal fire throughout the day. It marked the 93rd anniversary of the arrests of hundreds of Armenian intellectuals in Constantinople that were followed by the mass killings and deportations of Armenians from eastern regions of the crumbling Ottoman Empire.

As always, the annual remembrance of genocide victims began at Tsitsernakabert with a prayer service led

by the head of the Armenian Apostolic Church, Catholicos Garegin II.

The April 24 commemoration was also used by opposition leader Levon Ter-Petrosian and his allies for rallying more than 10,000 supporters in downtown Yerevan despite heavy police presence in and around Liberty Square, the scene of massive opposition demonstrations staged in the wake of the recent presidential election. Ignoring police orders to keep to the sidewalks and chanting anti-government slogans, crowd marched to the Tsitsernakabert hill where it was joined by Ter-Petrosian. Although the latter headed to his nearby house after laying flowers at the genocide memorial, most of the opposition supporters did not disperse and walked back to the city center.

Armenian Ombudsman Challenges Regime Version Of Post-Election Crackdown

YEREVAN -- Armenia's top state official in charge of human rights protection on Friday again challenged the official version of deadly post-election violence in Yerevan and, in particular, government claims that opposition protesters carried weapons and fired at security forces.

Ombudsman Armen Harutiunian also echoed international calls for an independent investigation into the March 1 clashes that left at least ten people dead and more than 160 others injured.

Harutiunian questioned the official theory in the immediate aftermath of the worst street violence in Armenia's history, prompting harsh criticism from then President Robert Kocharian. The latter ordered troops into the capital and declared a 20-day state of emergency to quell the opposition campaign for a rerun of last February's disputed presidential election.

Harutiunian stood by and elaborated on his critical statements in a 80-page report that detailed the dramatic events of March 1. The report says that the Armenian police have so far failed to publicize any evidence of the use of

firearms by the protesters.

Law-enforcement authorities say two of the victims, both of them interior troops servicemen, died of severe wounds caused by an explosive device and a bullet allegedly fired from the crowd. They say dozens of other soldiers and police officers were also shot and wounded in pitched battles with Ter-Petrosian supporters.

The ombudsman said that investigators have not yet explained the precise circumstances of the death of at least eight civilians, most of whom had fractured skulls. The authorities insist that security forces fired only into the air. Harutiunian pointed in that regard to an amateur video clip that shows a group of heavily armed and masked troops firing in front of them. He also described as "suspicious" the fact that the looting occurred hundreds of meters away from the epicenter of the protest and that shops and other businesses located within the barricaded area were left intact.

The ombudsman's report stresses that the deadly clashes were sparked by

Continued on page 4

ACA Takes Part In Armenian Genocide Observance On Capitol Hill Speaker Pelosi Renews Call For Genocide Affirmation

WASHINGTON, DC -- Armenian Council of America members from California, joined compatriots from East Coast at the annual Armenian Genocide Observance on Capitol Hill, organized by the Congressional Armenian Caucus on April 23, 2008. Over 200 Armenian Americans attended the observance on Capitol Hill where House Speaker Nancy Pelosi (D-CA) was joined by more than a dozen of her House and Senate colleagues in urging the passage of the Armenian Genocide Resolution (HR-106).

Receiving a standing ovation upon her arrival, Speaker Pelosi noted that she keeps a copy of the front page of the October 11, 2007, issue of The New York Times, which features a photo of Armenian Genocide survivors attending the House Foreign Affairs Committee markup of the Armenian Genocide Resolution (H.Res.106). The Speaker stated that the Committee, despite intense pressure from the Turkish Government and personal pleas by President George Bush, and Administration officials, the resolution passed by a 27 to 21, a statement that was appropriate to the values of the American people and a step closer for the House of Representatives reaffirming the historical truth of the Armenian Genocide.

Speaker Pelosi reaffirmed her commitment to this critical human



ACA representatives with Congressman Joe Knollenberg

rights issue.

"It is long past time for the President and Congress to formally recognize the Armenian Genocide," Pelosi told the crowd gathered at the observance event on Capitol Hill. "If we ignore history we are destined to repeat the mistakes of the past."

"On this anniversary we must remember the victims and survivors of the Armenian Genocide," she continued. "We must provide the leadership to ensure that his human tragedy is not repeated."

Majority Leader Steny Hoyer (D-MD) stated the US Congress needs to recognize the Armenian Genocide as fact for the sake of preventing future genocides by establishing the responsibility in future generations to never let it happen again.

"Denial is the child of repetition,"

Continued on page 2

President Bush Declines To Mention Genocide In His Last Message

WASHINGTON, DC -- U.S. President George W. Bush again declined to describe the mass killings and deportations of Armenians in Ottoman Turkey as genocide on Friday as he commemorated the 93rd anniversary of "one of the greatest tragedies of the 20th century."

"As we reflect on this epic human tragedy, we must resolve to redouble our efforts to promote peace, tolerance, and respect for the dignity of human life," Bush said in his annual address to the Armenian community in the United States. "The Armenian people's unalterable determination to triumph over tragedy and flourish is a testament to their strength of character and spirit."

"We welcome the efforts by individuals in Armenia and Turkey to fos-

ter reconciliation and peace, and support joint efforts for an open examination of the past in search of a shared understanding of these tragic events," he added.

Armenian-Americans were quick to express their disappointment with Bush's continuing refusal to call the slaughter of an estimated 1.5 million Armenian subjects of the Ottoman Empire a genocide recalling his 2000 pledge to recognize the genocide if elected president.

Bush has avoided using the politically sensitive term throughout his presidency, anxious not to antagonize Turkey.

Following is the full text of the message:

Statement By The President On Armenian Remembrance Day

On this day of remembrance, we honor the memory of the victims of one of the greatest tragedies of the 20th century, the mass killings and forced exile of as many as 1.5 million Armenians at the end of the Ottoman Empire. I join the Armenian community in America and around the world in commemorating this tragedy and mourning the loss of so many innocent lives.

As we reflect on this epic human tragedy, we must resolve to redouble our efforts to promote peace, tolerance, and respect for the dignity of human life. The Armenian people's unalterable determination to triumph over tragedy and flourish

Continued on page 2

Armenian Genocide Commemoration In New York's Times Square

անգերեզման: 1922 թուին Գահիրէ կը փոխադրուէին իրենց Հօրեղբօր Մարգիս Արգումանեանի ջանքերով: Հոն քոյրերը ազգային վարժարան կը յաճախէին ու Եղիա իր դերձակութեան արհեստով կը զբաղէր բանալով իր գործատեղին տակաւին 25 տարեկանին: Իրենց հայրը Յակոբ, յիսունը անց իր տարիքին, կը միանար իր երեք զաւակներուն, 1925-ին էվերէկէին Եղիայոս համելով Երուսաղէմի վրայով, ուր ուխտի կ'երթար Եղիշէ Դուրեան Պատրիարքի օրով ու անոր կը յանձնէր էվերէկէին իր հետ բերած ձեռագիր մատեան մը, «Գանձարան» մը, որպէս նուէր, որուն համար ալ Դուրեան Պատրիարք իրեն կը յանձնէր գնահատագիր մը որ ի պահ կը մնայ հանգուցեալ հօրս ինծի թողած թուղթերուն մէջ:

Եղիա կ'ամուսնանայ Սրբուհի Նշանեանի հետ, ծնեալ Գահիրէ Ֆէնէսէցի ծնողներէ, ու կը բախտաւորուին վեց զաւակներով՝ Մաքրուհի, Յակոբ, Դանիէլ, Յարութիւն, Էլիզ եւ Մարօ: Հայրը Յակոբ Արգումանեան կ'ապրի երկար, կը գրէ «էվերէկի Պատմութիւն»ը ու զայն կը հրատարակ Գահիրէի մէջ 1935 թուին: Գիրքին երկրորդ հատորը կը պատրաստէր երբ տողերս գրողը, տակաւին ութ տարեկան, գրի կ'առնէր ինչ որ ան մտովի կը շարադրէր: Բ Գիրքը լոյս չտեսաւ իր վերահաս մահուամբը: Յակոբ Արգումանեան կը մահանար Գահիրէ 1944-ին տեսնելէ ու վայելէ ետք իր վեց թոռ-

ները: Հօրաքրովներս՝ Վարդուհի եւ Աննիձա Գահիրէ կը մնան իրենց եղբօր եւ հօր հետ մինչեւ 1927, եւ նոյն տարին կը փոխադրուին Տիթրոյիթ, Միացեալ Նահանգներ ուր կ'ամուսնանան եւ չորսական զաւակներու տէր կը դառնան:

Տարագրուած եւ մահէն մազուրծ ազատած չորս վերապրողներ, հայր, որդի եւ երկու դուստրեր, ազգին ու Եղիշէցիին տուին Աստուծոյ օրհնութիւնը եղող զաւակներ, թոռներ եւ թոռան զաւակներ: Միայն Եղիա եւ Սրբուհի Արգումանեաններու ընտանիքը այսօր կը կազմեն 52 անձինք, ներառեալ անշուշտ իրենց: Մինչ թոռները կը բազմանային, Եղիա եւ Տիրամայր Սրբուհի Արգումանեաններ 1966 թուին Միացեալ Նահանգներ կը զաղթէին միանալու իրենց զաւակներուն: Եղիա տեսաւ ու վայելեց իր բոլոր 17 թոռները եւ մահացաւ 1982 թուին իր 87 տարիքին, Ֆիլատելիքա ապրելով 15 երջանիկ տարիներ: Տիրամայր Սրբուհի ապրեցաւ 95 տարիներ, իր կարգին տեսնելով գուրգուրալով եւ մեծցնելով 25 թոռան զաւակները եւս: Մահացաւ երկու տարի առաջ՝ 2006 թուի Մայիսին:

Այս «դիւցազներգութիւնը» հայոց ցեղասպանութեան դէմ սրբազան վրէժիսնդրութիւն մը կարելի է համարել անտարակոյս շնորհիւ հաւատաւոր, արթնամիտ, ազգասէր եւ Եղիշէցասէր հօր մը՝ Եղիա Արգումանեանի եւ շնորհազարդ եւ աղօթանուէր Տիրամայր Սրբուհիի որոնց Աստուծած պարգևեց անխախտ հաւատք ու անկոտրուծ կամք, նուիրում ու յարատել աշխատանք: Այսօր այս օրհնեալ ընտանիքը իր 50 անդամներով, տա-

րածուած չորս սերունդներու վրայ, Արգումանեան գերդաստանի պատմութեան մէջ նշանակալից հանգուած մը կը կազմեն: Հայոց Յեղասպանութիւնը թուրք կառավարութեան ձեռքով կատարուեցաւ ու անմեղ սերունդներ փացանաներու մէջ:

Յակոբ Արգումանեան կրնար մեռնիլ կեսարիոյ բանտին մէջ ինչպէս շատ մը գրադէտներ ու ազգային գործիչներ սպանութեանէ: Եղիա եւ իր քոյրերը կրնային ջարդուիլ շարադրութեան մէջ իրենց տարագրութեան ճամբուն վրայ ինչպէս հազարաւորներ եթէ հօրս Եղիայի ճարտար բնաւորութիւնն ու աշխատասիրութիւնը, հաւատքն ու յոյսը պակսէին իրմէ: Կը վերջանար Արգումանեան ընտանիքի այդ աւագ ճիւղը ամբողջովին: Իցիւ թէ բազմահազար ընտանիքներ եւս նոյն ճակատագրուվ ազատէին ինչպէս իրենք ազատեցին ինքինքնին այս կերպ կամ այն կերպ: Այսօր չորսն ի մի, թէ իսկ հեռացած այս աշխարհէն, կը միշտին որպէս յառաջապահ վերապրողներ, հայր, որդի եւ երկու դուստրեր, որոնց միացաւ Տիրամայր Սրբուհին որպէս նուիրեալ կողակիցը Եղիա Արգումանեանի: Իրենց ետին թողած աւանդը այսօր Աստուծած օրհնելով օրհնած է, ընծայելով 50 ժառանգործներ որպէս արդար վրէժ անարդ թշնամիին, փաստորէն ընելով թէ հու ենք, կանք ու կը մնանք:

Այս տողերս թող նաեւ ըլլան հաւատարապէս ընծայելի ամէն հայ ընտանիքի որ վերապրեցաւ պատուով՝ պարձանք բերելով հայ ազգին եւ Եղիշէցիին:

Հայ Թելեժամբ կը Վերադառնայ 18ը Ալիբի Վրայ

Ոչ թէ մեկ, ոչ թէ 2, ոչ թէ 3 ժամ, այլ Օրուան 24 ժամերը

Շաբաթը 7 օր անվճար

Հարկ չկայ բաժանորդագրուելու - 40 Ցաւելեալ ալիքներ Ցաւելեալ տեղեկութիւններու համար դիմել Հայկական Թելեժամբ (818) 982-2400

The Armenian Teletime Is Back On Channel 18

Not 1 Hour, Not 2 Hours, Not 3 Hours But 24 Hours Per Day

7 Days Per Week, Free

No Subscription Fee - Plus 40 Additional Channels

For info call The Armenian Channel (818) 982-2400

**ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ
ՇԵՌՈՒՏԱՏԵՄԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ
CHARTER CABLE 280-ՐԴ ԿԱՅԱՆ
(ԿԼԻՆՏԵՅԼ, ՊԾՐՊԵՆՔ, ԼԱ ԶՐԵՍԻՆԹԱ)
GLOABCST SATELLITE**

ՀԻՆԳՉԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԱՆՈՒՅՈՒՆ 10:00-11:00

**ՄԱՅՐԵՐՈՒ
ՕՐՈՒԱՅ
ՆԱԽԱԺԱԾԱԾ**

Կազմակերպութեամբ
Հ.Մ.Մ.-ի Տիկնաց Միութեան

ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ՇՈԽ ՅԱՅՏԱԳԻՐ

Օրուայ Հիւրեր՝
Բանախուս՝ Տիկին Արաքսի Թաթուլեան
Երգչոր՝ Մարգարիտ Շահնինեան

Կիրակի, 11 Մայիս 2008
առաւտեան ժամը 10:00-ին
Հ.Մ.Մ.-ի Կարօ Սողանակիան
սրահին մէջ
1060 N. Allen Ave., Pasadena

Մուտքի Նուէր՝ \$20.00

Տոմսերու համար դիմուլ՝
Կարինելից
(626) 755-4773
կամ Ծովիկից
(626) 429-8366



Հ.Մ.Մ.-ի Տիկնաց Միութեան

ՀԱՅ ԹԵԼԵՀԱՄԲ ԿԸ ՎԵՐԱԴԱՐՆԱՅ

18ը Ալիբի Վրայ

Շաբաթը 7 օր անվճար

Հարկ չկայ բաժանորդագրուելու - 40 Ցաւելեալ ալիքներ Ցաւելեալ տեղեկութիւններու համար դիմել Հայկական ԹելեՀամբ (818) 982-2400

ՆՈՐ ՇՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ


ՊԵՊՈ ՄԻՄՈՆԵԱՆ «ԷԶԵՐ ԵՒ ՆԻՒԹԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ» Ա. Հատոր

Սփիւռքահայ ծանօթ բանաստեղծ, արձակագիր եւ գրականագէտ Պէտք Սիմոնեանի «Էջեր եւ Նիւթեր», Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան մեկնասութեամբ հրատարակուած ներկայ գիրքին Ա. Հատորը, լոյս ընծայուած է կաթողիկոսութեան Հայոց, Մեծի Տան Կիլիկիոյ (Անթիլիս-Լիբանան) տպարանէն:

367 էջերէ բաղկացած այս գեղատիպ, խնամուած, այլապէս պատկառելի հատորը, իր մէջ կ'ամփոփէ հեղինակին, դեռեւս 1966 թ. ասդին, մամուլի էջերու մէջ լոյս ընծայուած յօդուածները, որոնք կը պահեն իրենց այժմէականութիւնը:

Պէտք Սիմոնեանի պրապող միտքը, առանց նախապաշարումի, իր քննական լուսարձակին տակ կ'առնէ մեր արեւմտահայ եւ արեւելահայ զրոյներէն շատեր, կ'ուսումնասիրէ անոնց ստեղծագործական յատկանիշները, արեւելումները եւ ներդրումը մեր հայ գրականութենէն ներս:

Հոն է իրապաշտական ձգտումներու արտայացտիչ գեղամ Բարսեղանը: Պանդուխտ հոգիներու երգիչ Մելքոն Կիւրճեանը: Գաւառի արուեստագէտը, «Իրապաշտ գիւղագիր» Թլկատինցին: Հոն են ուրիշներու կարգին «Նահանջը Առանց Երգի» շատերու կողմէ փարիզեան թեթեւ վէպ նկատուած՝ կոթողային վէպի հեղինակ Շահան Շահնուրը: «Անկախ իր տարերայնութեան եւ յախուռնութեամբ անզուսպ դրսեւորումներէն՝ իր գրական հեղինակութիւնը պահող» Վազգէն Շուշանեանը: Նախապէս վիճելի՝ իր բառախաղերուն անսեթեւեթ հոսքով սիրուած Զահրատն, ու, «իր հոգեկան միստիք ապրումներուն կրօնաշունչ դրսեւորումներ տուող» ժագ Յակոբեանը: «Իր գիրի ու բանի երկարաշունչ սպասարկու» Մուշեղ Իշխանն ու «Յետ եղեռնեան սերունդի բանաստեղծութեան առաջնորդ դէմքերէն վահէ վահեանը: Ու այսպէս, Պէտք Սիմոնեան, շարքով կ'ուսումնասիրէ իր բառական գրականութիւնի արժակուած համարական մօտեցումով կ'անդրադառնայ շարք մը ընդհանուրական բնոյթի նիւթերու վրայ, ինչպէս՝ 1915-ի եղեռնը եւ Արեւմտահայ Գրականութիւնը: Պոլսահայ Բանաստեղծութեան Նոր Դպրոցը: Փարիզի «Մենք»ին Տեղը Սփիւռքի Գրական Մամուլի Պատմութեան Մէջ», եւայլն:



Համար ապրող» Անդրանիկ Մառուկեանը, «Խոհական-իմացական ոլորտով յագեցած բանաստեղծ» Երուանդ Պարսումեան, «Արեւմտա-եւրոպական ճաշակով կազմուած եւ արեւմտահայ հոգեխառնութեամբ շաղուած քննադատ» Յակոբը Օշականը: «Հայ բանաստեղծութեան ամենէն մեծ քնարերգակ» Վահան Տէրեանը: «Հայու կենասակիլիստիքին՝ հեղինակին տուած այցելութիւնները կը յագեցուին պատմողական ջերմ ոճով: Կը տրուին մեր պատմական քաղաքներու, բերդերու, եկեղեցիներու, բնակարաններու մասին ծանօթութիւնները: Կան կենցաղակին, ճարտարապետական նկարագրութիւնները: Կայ անդրադարձ մեր ժողովուրդի շէնչող նախաքրիստոնէական թագաւորական շրջաններէն մինչեւ ներկայ մեր տիրապետութիւնուն հայրէնիքին տիրանալու համար...»: Համաձայն ԱՄՆ-ի ՓոխՆախագահ Սիր Զէնիի՝ քաղաքական որոշումներ առնողներու, դիւնագէտներու, ակադեմիկոններու եւ լրագրողներու կողմէ, ԱՄՆ-ի Նախագահ Ջորջ Ուուչի կողմէ շքանշանով վարձատրուած Փրոփ. Պեռնար Լէուիսը: Լէուիսը ծիծաղելիօրէն կը նկրտէր պաշտպանելու Ցեղասպանութեան կապակցութեամբ իր այն համոզումը, թէ «1915-ին կատաղի պայքար մը սկսաւ թուրքերու եւ հայերու միջեւ միեւնոցն հայրէնիքին տիրանալու համար...»: Համաձայն ԱՄՆ-ի ՓոխՆախագահ Սիր Զէնիի՝ քաղաքական որոշումներ առնողներու, դիւնագէտներու, ակադեմիկոններու եւ լրագրողներու կողմէ, ԱՄՆ-ի Նախագահ Ջորջ Ուուչի կողմէ շքանշանով վարձատրուած Փրոփ. Պեռնար Լէուիսի իմաստութիւնը կը փնտուի էջ 151», որպէս թէ:

Գրքին այս երկրորդ բաժնին մէջ, հեղինակը, նոյնպէս ուշադրութիւն գրաւող անդրադարձներ ստորագրած է «Թրքական Ազգայնամոլութեան» եւ «Հայոց Ցեղասպանութեան թեման Հայ Գրականութեան Մէջ», ուր համբէս կու զան հայրենիթէ սփիւռքահայ յետ-եղեռնեան մեր մէծագոյն գրողները:

Պէտք Սիմոնեան, նաեւ, վերլուծական մօտեցումով կ'անդրադառնայ շարք մը ընդհանուրական բնոյթի նիւթերու վրայ, ինչպէս՝ 1915-ի եղեռնը եւ Արեւմտահայ Գրականութիւնը: Պոլսահայ Բանաստեղծութեան Նոր Դպրոցը: Փարիզի «Մենք»ին Տեղը Սփիւռքի Գրական Մամուլի Պատմութեան Մէջ», եւայլն:

Ինքոյնք արդարացնող հրատարակութիւն մը, գնահատանքի արժանի:

Մեր սեղանին վրայ դրուած լու Անձելոսաբնակ Անահիտ Մէյմարեանի «Քարերը կ'աղաղակեն» նոր գիրքը, զոր հրատարակութեան պատրաստած է Աւետիս Զափարեան, լուս տեսած է 2008-ին:


Գիրքը կը բաղկանայ 224 պատկերազարդ էջերէ եւ կուգայ աւելնալ իր նախորդ, 2005-ին լոյս ընծայած «Խմ Սուրբ Հայրենիք» ազգային-հայրենասիրական բովանդակութեամբ հեղինակութեան վրայ՝ որպէս յառաջաբան ունի լիբանանահայ վաստակաշտ մանկավարժ, մտաւորական եւ պատմագէտ Զաւէն Մուրլեանի երկու Խօսքը:

Անահիտ Մէյմարեանի «Քարերը կ'աղաղակեն» ներկայ հեղինակութիւնը կը բաժնուի երկու մասի: Առաջինը՝ էջ 15-էն 127, ունի ուխտագնացութեան օրագրութեան բնոյթ. «Կիլիկիոյ Արեւմտեան Հայաստանի եւ Կոստանդնուպոլիսոյ Մէջ» վերտառութեամբ:

Պատկերազարդ, գունագեղ, խնամուած եւ մաքուր տպագրութիւն: Մեր պատմական հայրենիքին՝ հեղինակին տուած այցելութիւնները կը յագեցուին պատմողական ջերմ ոճով: Կը տրուին մեր պատմական քաղաքներու, բերդերու, եկեղեցիներու, բնակարաններու մասին ծանօթութիւնները: Կան կենցաղակին, ճարտարապետական նկարագրութիւնները: Կայ անդրադարձ մեր ժողովուրդի շէնչող նախաքրիստոնէական թագաւորական շրջաններէն մինչեւ ներկայ մեր տիրապետութիւնուն հայրէնիքին տիրանալու համար...»: Համաձայն ԱՄՆ-ի ՓոխՆախագահ Սիր Զէնիի՝ քաղաքական որոշումներ առնողներու, դիւնագէտներու, ակադեմիկոններու եւ լրագրողներու կողմէ, ԱՄՆ-ի Նախագահ Ջորջ Ուուչի կողմէ շքանշանով վարձատրուած Փրոփ. Պեռնար Լէուիսի իմաստութիւնը կը փնտուի էջ 151», որպէս թէ:

Գրքին այս երկրորդ բաժնին մէջ, հեղինակը, նոյնպէս ուշադրութիւն գրաւող անդրադարձներ ստորագրած է «Թրքական Ազգայնամոլութեան» եւ «Հայոց Ցեղասպանութեան թեման Հայ Գրականութեան Մէջ», ուր համբէս կու զան հայրենիթէ սփիւռքահայ յետ-եղեռնեան մեր մէծագոյն գրողները:

ԱՆԱՀԻՏ ՄԵՅՄԱՐԵԱՆ «ՔԱՐԵՐԸ Կ'ԱՂԱՂԱԿԵՆ»




Հի պատմումներով յաջորդաբար կը ներկայացնէ թուրք արդարադատ գրողներ Օրհան Փամուրքը՝ անոր «Զիւն Վէպին, էլիֆ Շաֆաքը՝ անոր «Խսպամպուլի Բիճը» վէպին եւ թանձը Արարակ Արարակը՝ մը» վէպին ընդմէջնէն: Նաեւ, Մէյմարեան, կը ներկայացնէ հայտեաց, այլապէս Հայոց Ցեղասպանութիւնը ուրացող, պատմական ճշմարտութիւնները դաւադրաբար նենդագուխող եւ ընդհանրացնող թրքածոլ Փրոփ. Պեռնար Լէուիսը: Լէուիսը ծիծաղելիօրէն կը նկրտէր պաշտպանելու Ցեղասպանութեան կապակցութեամբ իր այն համոզումը, թէ «1915-ին կատաղի պայքար մը սկսաւ թուրքերու եւ հայերու միջեւ միեւնոցն հայրէնիքին տիրանալու համար...»: Համաձայն ԱՄՆ-ի ՓոխՆախագահ Սիր Զէնիի՝ քաղաքական որոշումներ առնողներու, դիւնագէտներու, ակադեմիկոններու եւ լրագրողներու կողմէ, ԱՄՆ-ի Նախագահ Ջորջ Ուուչի կողմէ շքանշանով վարձատրուած Փրոփ. Պեռնար Լէուիսի իմաստութիւնը կը փնտուի էջ 151», որպէս թէ:

Գրքին այս երկրորդ բաժնին մէջ, հեղինակը, նոյնպէս ուշադրութիւն գրաւող անդրադարձներ ստորագրած է «Թրքական Ազգայնամոլութեան» եւ «Հայոց Ցեղասպանութեան թեման Հայ Գրականութեան Մէջ», ուր համբէս կու զան հայրենիթէ սփիւռքահայ յետ-եղեռնեան մեր մէծագոյն գրողները:

Երկրորդը՝ էջ 129-էն 207, ունի «Ակնարկներ Հայոց Ցեղասպանութեան Վեհապատճեան Դպրոցը: Փարիզի «Մենք»ին Տեղը Սփիւռքի Գրական Մամուլի Պատմութեան Մէջ», եւայլն:

Ինքոյնք արդարացնող հրատարակութիւն մը, գնահատանքի արժանի:



ՃԱՄԲՈՐԴԱԿԱՆ

ԵՐԱԶՄԻՆ ԳՈՒՊԱՆ

ՀԱՅԿՆԱԳԳԱՇԵԱՆ

Մ. Ն. Ֆլորիտա թերակղզին հարաւը մեծ կղզի մըն է Գուպան՝ 115,000 քառ. քլմ. տարածութեամբ եւ շուրջ 12 միլիոն քնակչութեամբ։ Նախկին սպանական այս գաղութը անկախ դարձա 1849ին։ Բնակչութեան հիմնական մասը գաղթայն օրերէն մնացած սպանացիներն են, սեւամորթներ եւ այս երկուքին խանուրդէն յառաջ եկած խառնածինները։ Պետական ու ժողովրդական լեզուն սպաներէնն է։ Քասներորդ դարու բ. կէսին Գուպան թատր հանդիսացաւ քաղաքացիական արիւնալի պատերազմի մը, տապալելու համար բոնատէր Պաթիսթան, որ վերջացաւ Ֆիտել Քամթրոցի եւ իր զինակից Զէ Կեվարացի գլխաւորած համայնավար յեղափոխութեան յաղթանակով։ Զէ Կեվարան արժանթինցի խտէալիստ մարքսիստ մը ըլլալով, Գուպայի յեղափոխութեան յաջողութեանը յետոյ ուղեւորուեցաւ Հարաւային Ամերիկա՝ հոն եւս համայնավար յեղափոխութիւն կազմակերպելու համար, եւ հոն ալ սպաննուեցաւ։ Գուպայի յեղափոխութեան աւարտին, 1959-էն ի վեր իշխանութեան գլուխը կը մնայ Ֆիտել Քամթրօն, արդէն 83 տարեկան, վասառողջ վիճակին պատճառով վերջերս իշխանութիւնը փոխանցեց կրտսեր եղբօր Ռառուլին՝ մինչեւ որ նոր զեկավար մը ընտրուի։

Բնականաբար, Գուպայի համայնավարացումը մարսելի իրականութիւն մը չէր իր հօգոր դրացի-ին։ Մ. Նահանգներուն համար, որ տնտեսական ու քաղաքական ճնշումներով եւ նաեւ զինուորական միջամտութեամք փորձեց իրեն ենթարկել Գուպան։ Մ. Նահանգներութշնամական այս վարմունքին դիմաց Գուպան օգնութեան դիմեց Մ. Միութեան, որ փութեաց հրթիռներու պաշտպանութեան ցանց մը հաստատել հոն, ինչ որ Մ. Նահանգներուն համար իր ապահովութեան սպառնալիք նկատուեցաւ եւ որուն հետեւանքով ամերիկեան ուղղմանաւերը ծովային պաշարման տակ առին Գուպան։ 1960-էն ստեղծուած այս կացութիւնը պայթուցիկ վիճակ մը զգեցաւ, մարդկութիւնը դնելով համաշխարհային պատերազմի մը արհաւերքին առջեւ։ Ահա այդ պահուն է որ Սովետ Միութեան նախագահ Անաստաս Միկոյեան վարչապետ Խրուչչեվի կողմէ առաքելութիւն ստացաւ այս վտանգաւոր կացութեան առաջքը առնելու բազմաթիւ անգամներ երթեւեկելով յաջողեցաւ քակել «Գորթեան հանգուցը», համաձայնութիւն գոյացնելով որ Մ. Միութիւնը քանդէ իր հաստատած հրթիռներու ցանցը, իսկ Մ. Նահանգներ քանդէ իր պաշարման օղակը, միաժամանակ, խոստանալով յարգել Գուպայի անկախութիւնը։ Այժմ, Գուպայի մէջ կը տիրէ համայնապար վարչաձեւը։ Մ. Միութեան փոխարքն զօրակցութիւնը վայելելով Զինաստանի:

Գուպան հարուստ է հանքերով
եւ երկրագործական արտադրու-
թիւններով։ Հանքերու գանազան
տեսակներուն մէջ զլիսաւորներն են
երկաթն ու նիքելը։ Իսկ երկրագոր-
ծական արտադրութիւններուն մէջ
շաքարեղիզը, ծխախոտը, բամպակը
եւ քոքոն Գուպան աշխարհահռչակ
կը դարձնեն։ Շաքարեղինէն ստաց-
ուած ուամր (Ron) եւ ծխախոտէն

ստացուած սիկառները համաշխարհ հային համբաւ ունին: Այս բոլորը հարուստ եկամուտ կ'ապահովեն Գուղացին, բայց, գուցէ, մեծագոյն եկամուտը կ'ունենայ զբօսաշրջութենին: Աշխարհի բոլոր կողմերէն միլիոնաւոր զբօսաշրջիկներ Գուղակը խուժեն՝ վայելելու համար անորհաճելի կլիման, գեղեցիկ բնութիւնը և համայնք ծովն ու ծովափները: Հիմնական երկու բառով կարելի է բնորոշել Գուղան՝ գեղեցկութիւնը ու մաքրութիւնը: Գեղեցկութիւնը եթէ բնութեան պարզեւն է, մաքրութիւնը մարդու գործն է: Այո՛, ակնբախ է Գուղակի մաքրութիւնը: Մեր կեցութեան վայրը Վարատերո քաղաքն էր, ուր մաքրութիւն կը տիրեր ներքին փողոցներէն մինչեւ ծովափ:

Ուստող, խմզող, երգողու ու պարող
ժողովուրդ է գուպացին։ Գուպայա-
կան երաժշտութիւնը օդին մէջն է
անդադար։ Մեր հիւրանոցէն մինչեւ
ծովափ երկարող շուրջ 300 մետր
ճամբուն վրայ բազմաթիւ խմա-
րաններ (պար) ու ճաշարաններ կան։
Աշխարհի բոլորը ըմպելիններու կող-
քին տիրապետողն է տեղական ռա-
ծը, որ հիմնական բաղադրամասն է
շատ մը քոքթէցներու, որոնց գլխա-
ւորն է Հեմինկուէցը։ Ինչպէս ըսի,
աշխարհի բոլոր կողմերէն եկող
թուրիսթները կը վայելեն այդ բո-
լորը, բացի գրկից Ամերիկացի ժո-
ղովուրդէն, որուն արգիլուած է
Գուպա այցելել։ Անիրաւ եւ անզօր
փորձ մըն է Գուպան տնտեսապէս
ընկճելու համար, որուն հետեւան-
քով ամերիկացի ժողովուրդն է որ
կը գրկուի հրաշալի արձակուրդնե-
րու հաճուքներէն։

Մէկ շարթուան մէր անմոռա-
նալի կեցութեան ընթացքին օր մը
տրամադրեցինք Գուպայի մայրա-
քաղաք Հավանա այցելութեան, որ
օժողուասով շուրջ երկու ժամ տե-
ւեց: Հավանան մէծ եւ արդիական
քաղաք մը ըն է, հարուստ՝ տեսարժան
վայրերով ու թանգարաններով,
որոնցմէ ոմանց այցելեցինք մեր
ժամանակին թուլատրած չափով:
Ինձի համար ամենէն հետաքրքրա-
կան վայրը մէծ զրոյին բնակած
պանդոկն էր եւ այն սրճարանը՝ ուր
ան ժամանց կը կատարէր, ըմպելով
այդ համեղ ըմպէկին, որ իր անունով
մկրտուեցաւ: Գուպան իրաւամբ
հպարտ է ամերիկածին իր հարազա-
տով, որուն ապրելու նախամիրած
վայրը Գուպան եղաւ, ի վերջոյն
որսորդի իր բնազդը զինք առաջ-
նորդելով Քենիա, ուր ան Սպանիոյ
քարաքայիսական պատերազմին մաս-
նակցութեան ընթացքին ստացած
իր վէրքերուն ցաւերովը տառապե-
ցաւ առանց դարձանի եւ վերադա-
ռանալով իր ծննդավայրը՝ Այտահօ,
ի վերջոյն անձնասպան եղաւ:

Մեր վայելած հաճուքներուն
գլխաւորը ծովն էր անշուշտ: Մովկ
որ խենթ ու խելառ Ատլանտեան
Ովկիանոսն է, որ Գուպայի ափերուն
վերածուած է խելօք եւ անսահման
ջրաւազանի մը, որուն յատակը
ծածկուած է մաքուր եւ նուրբ
աւազով եւ որուն վրաց կրնաս քալել
աւելի քան հարիւր մեթր՝ կուրծքու

գուրս պահած։
Վերջապէս, ինչ զրեմ տակաւ-
լին. գուպայական արձակուրդին
պարզեւած ո՛ր մէկ հաճովքը թուեմ;
Կը խորհիմ թէ ամենէն ճիշդը պիտի
ըլլար թելադրել որ անձամբ ապրիք
այդ փորձառութիւնը։

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՐՈՒԹՅՈՒՆ

Զարմանահրաշ եւ երփներանու
երկիր է Հնդկաստան աշխարհը
որը միշտ իրեն է ձգել մարդ
արարածին, իր հարուստ մշակոյց
թով եւ պատժութեամբ, անօրինակ
ճարտարապետութեամբ եւ կրօնա-
կան ինձնանկարով։ Ուստի ամէն մը
մարդ իր կեանքի ընթացքում գէօն
մէկ անգամ ցանկանում է այցելել
Հեքիաթացին այդ երկիրը, իր սե-
փական աչքերով տեսնելու հին
քաղաքակրթութիւն ունեցող
Հնդկաստանի հրաշալիքներն ու
տեսարժան վայրերը։ Այս ամէնից



Կալկաթայի Ա. Երրորդութիւն եկեղեցին եւ գերեզմանոց

բացի, չպէտք է մոռանալ, որ
Հնդկաստանը շատ հոգեհարազար
երկիր է յատկապէս հայերիս հա-
մար, ովքեր բնակութիւն են հաս-
տատել այնտեղ, կառուցցել հայկա-
կան եկեղեցիներ եւ կրթական հաս-
տատութիւններ, տպագրել հայկա-
կան պարբերականներ եւ բացել
ակումբներ՝ փորձելով վառ պահե-
հայութեան ոգին ու շունչն այն-
տեղ:

Այսելութիւնը կազմակերպել
էր TNI HOLIDAYS զբոսաշրջկու-
թեան գործակալութեան համա-
կարգող Հելենա Քրեյը, ով ծնուե-
ել մեծացել էր Հնդկաստանում
ուսանել կալկաթայի Հայոց Մար-
դասիրական ճենարանում՝ քաջա-
ծանօթ լինելով երկրի պատմու-
թեանը եւ ժողովրդի հոգեբանու-
թեանը։ Այս ամէնին մեծապէս
օգնեց նաեւ Հելենայի՝ Հնդկերէն
լեզուի վարժ իմացութիւնը։

Հայէրից կազմուած խումբը
շուրջ մէկ շաբաթ անցկացրեց
Հնդկաստանի մայրաքաղաք Դե-
լիում, ուր նրանք այցելեցին քա-
ղաքի պատմամշակութային զա-
նազան վայրեր, փորձեցին հնդկա-
կան խոհանոցը՝ մօտիկից ծանօ-
թանալով բազմաթիւ հնդկների
հետ: Անշուշտ այցելել Հնդկաս-
տան եւ չտեսնել աշխարհի հրաշ-
լիքներից մէկը՝ հոչակաւոր թաշ
Մահալը, նշանակում է չլինել
Հնոկաստանում:

Ուստի զբօսաշրջիկներն այցելեցին Զայփուր, այնուհետեւ նաեւ Ագրաշիրենց սեփական աշքը բով տեսնելով թաջ Մահալը:

Դեղիում մեկ շաբաթ մնալուց
լետու նրանք մեկնեցին Կայկաթա-

Երբեմնի հայաշունչ հնդկական այդ
քաղաքը: Նրանք եղան հայկական
եկեղեցիներում, մօտիկից ծանօ-
թացան եկեղեցիների պատմութեա-
նը, այցելեցին հայկական գերեզ-
մանոց եւ ծերանոց: Հետաքրքրա-
կան էր յատկապէս այցելութիւնը
Հայոց Մարդապիրական ճեմարան,
ուր Նրանց դիմաւորեց հնդկահա-
յոց հոգեւոր հովիւ եւ ճեմարանի
կառավարիչ Տ. Օշական վարդա-
պետ Գիւլգիւլեանը: Նա անդրա-
դարձաւ ճեմարանի պատմութեա-
նը եւ վերջին շրջանում ճեմարա-

Նականների արձանագրած յաջո-
ղութիւններին: Հիւրերն առիթու-
նեցան անձնապէս շփուելու եւ զրու-
ցելու ճնմարանականների հետ՝ մի-
ամսնաբար ճաշելով նրանց հետ
ճեմարանի ճաշարանում: Հնդկա-
հայոց հոգեւոր հովուի նախաձեռ-
նութեամբ ուխտաւոր հայորդի-
ներն այցելեցին նաեւ Սեյզաբադ,
ուր երկու դար առաջ բազում
հայեր էին ապրում՝ զբաղուելով
յատկապէս մետաքսի առեւտրով:
Նրանք իրենց աղօթքը մրմնջացին
1758 թ. կառուցուած Ս. Աստուա-
ծածին հայկական եկեղեցում, շրջե-
ցին եկեղեցու տարածքում եւ ծա-
նօթացան վերջին տարիններին կա-

տարուած զերանորոգչական աշ-
խատանքներին:

Ամերիկաբնակ հայորդիների
համար Կալիկաթայում ընթրիք
տրուեց Կալիկաթալի եկեղեցական
վարչութեան փոխատենապետեր
Սունիլ Սոբթիի եւ Սիւզան Ռուբե-
նի կողմից, որի ընթացքում վար-
չութեան անդամները ներկաներին
ծանօթացը եցին հայ համայնքի ներ-
կայ վիճակի եւ իրենց ապագայ
ծրագրերի հետ, որոնց նպատակն է
վերականգնել երբեմնի հայաշունչ
գաղութի հայրենասիրութեան եւ
եկեղեցահրութեան ոգին: Խմբի
անդամները շատ տպաւորուած եւ
զգացուած էին եկեղեցական վար-
չութեան այս քայլից: Նրանք շնոր-
հակալութիւն յայտնեցին ընթրի-
քի համար եւ յաջողութիւններ
մաղթեցին իրենց ծրագրերի իրա-
կանութեան առաջնային աշխատանքներին:

կանացման գործում։
ինչեւիցէ, եթէ ցանկանում էք
մասնակիցը դառնալ նմանատիպ
արշաւների, ապա խնդրում ենք
կապ հաստատել Հեղենա Քրեյի
հետ՝ հետեւեալ հեռախօսահամա-
րով՝ (818) 517-2901։

ԽՈՐԱՆ

»Հայաստանը մեր զոհն է, նա զոհաբերութեց մեր կողմից կերտած յաղթանակի զոհասեղանին: Մենք տուինք թուրքերին հնարաւորութիւն իրագործելու այս ոճրագործութիւնը«

ՊՈՂՈՎԼԱԳԻՍԵԱՆ

Լեռուեր, լեռուեր, մի ամքողջ
աշխարհ լեռներ, որին կոչել են
Հայկական Լեռնաշխարհ: «Հայու»
աստծոյ որդի՝ «Հայկ»ն էր եղել
Նահապետը այդ աշխարհի: Նրա
որդիների սերունդները նահապետի
անունով հայ էին կոչել իրենց: Այդ
լեռների լանջերին, նրանց հովիտ-
ներում բազում ջներ էին հիմնել,
պարտէգներ, արտեր արարել: Բազ-
մացել էին այնքան, որ տասից մէկին
զինուորազրելով լիսուն բիւր զի-
նուորներով հեռու աշխարհներ հա-
սել: Սրբազն էին կոչել այդ լեռ-
նաշխարհը, չեռու ապրող մարդիկ կ-
դրախտիկ աշխարհ էին անուանել
այն, իրենց դաշտերին ու արտերին
ջուր հոտող գետերին «Դրախտի
Գետեր»:

Սրբազն Լեռնաշխարհ, Նրանց
գաղաթներին աստուածներն էին
իջնում: Արեւն էր իր երթի աւար-
տին խարոյկ վարում, ծխածան գոտի
կապում նրանց լանջերին, լուսն-
եակն էր գիշերները իջնում իր
դժմքը ապիտակ ձիւնով շաղելու,
աստղերն էին թիկնում նրանց գա-
ղաթներին տիեզերքի ժպիտը լոր-
դելու:

Հայոց աստուածները տիեզեր-
քից իշել էին սրբազն այդ լեռնաշ-
խարհ։ Հարաւի ժողովուրգները հա-
ւատացել էին որ «Ար» Արեւ աստ-
ուածն այնտեղ էր ծնուել։ Արի,
իմաստուն Արամազդը իր դուստ-
րեր՝ Անահիտին բերել էր հայոց
աշխարհ որ մայրանալին դաշտերն
ու արտերը, որ պտղաբերէին այգի-
ները, Նանէին՝ որ իմաստութիւն
յորդէր համերի հոգիներին։ Վահագն
էր եղեգան բոցից յառնել, որ քաջու-
թիւն հոսէր հայոց սրտերին, որ
իրենց հողի պաշտպանութեան մար-
տերում լաղթանակ կոփէին։ Լուսն-

ხალები ამით და ტქმდოվ Աსთღესის ხე
ხეხელ აქრის ზოულანდში ისიც აქონელი
ავით აგარარის: უწირნ ხე თხეხ-
ყერებები მარ «Արեւ» պոկած բერელ
აგარარ, აյդ ջահი კხანდში լոյս,
լոյս ցიხელու: Աստուაծნეրի თხნალ-
ყერ Տბერენ հაյոց լեռնաշխარհ
ճამბეჭელ, որ տხეხეրական գրերով
բանաստեղծութիւն երկնէին, երգե-
րով հայոց աստուածների փառաբա-
նէին: Վանաստուը աստուածն էր
հայոց აგარაր ճամբաներին
խրճիթներ պատել, որ պարտասեալ
անցորդները պատսպարուէին: Բա-
րեպաշտ էին հայոց աստուածները,
իրենց «բարի»ի իմաստութիւնն
էին հուել սրբազն լեռնաշխարհին:

Հայոց լեռնաշխարհի սիրտ՝
Տարօնի երկիր Աշտիշատում, աստ-
ուածների քաղաք՝ Բագարանում,
Ճեկաններ պատեցին: Իրենց սրտե-
րում հոսած քաջութեան, իրենց
աշխարհի հողի յառնած ոգու կան-
չով մղուած կուիւների յաղթանակի
համար փառաբանեցին աստուածնե-
րին, նրանց բազինների առաջ ցու-
լերի արիւն հեղեղեցին: Ոչ թէ
աղօթում էին, այլ նրանց լոյսի,
սիրոյ, մայրութեան, քաջութեան,
կուուի իմաստութիւնն էին գովեր-
գում: Յանուն ցեղին սրտի, յանուն
հողի ոգու կանչի մղուած յաղթա-
նակների հրայրքի հուրն իրենց
սրտերում՝ ճեկանների շուրջ պար
էին բուել նրանց հրապարակներում
արքաների, իշխանների հետ տօնել
աստուածների ծնունդ, իրենց քա-
ջերի յաղթանակներ, ծաղկի, բերքի,

լոյսի, սիրոյ տօնախմբութիւններ
կատարել, ալեկոծ սրտերով Նաւա-
սարդ տօնախմբել:

Հազար, հազար տարիներ իրենց
լեռնաշխարհը գրկած, նրա հողին
փարած մնացել էր հայր: Իրենց
արարման հետքից քրտինք հոսել
հողին, նրա պաշտպանութեան մար-
տերում իրենց որդեանց արինը
յեղել, «ոգի» եղել: Խորասկել էին
ասորեատանցիների, բաբելացիների,
պարթեաների իրենց երկիր արշա-
ւած բանակները: Քարից երկաթ
էին ձուլել, երկաթեայ գինքերով
երկիրն իրենց լայնացրել մինչեւ
հեռու ծովերի կապոյտները, իրենց
մարտական կառքերով մինչեւ Նե-
ղոս եւ մինչեւ ուր կը համնէր իրենց
վահագնի կրակ քաջութեան սահ-
մանները: Հայոց աստուածները, տի-
եզերքից բերած կենառուժ էին հոսել
իրենց լեռնաշխարհին: Իրենց բե-
րած «Ամահութեան Ծառ»ն էին
հայոց հողին ցանել, որն յափշտա-
կելու համար հայու ծիներով մակե-
դոնական արքայ՝ Մեծն Աղեքսանդ-
րի վաշտերը արշաւել հայոց երկիր՝
այն իրենց Մակեդոնիա տանելու:
Հայեր վուստել էին նրանց:

Հեթանոս մի արքաց՝ Տրդատ,
իր յաղթական բանակը բերել էր
հայոց սրբազն գետ Արածանիի
գորակայան, իր աստուածներին փա-
ռաբաննելու։ Այդ կուլում քաջու-
թիւն ցուցաբերած վաշտապետին
առաջարկած էր եղել ծաղկեպսակ
նուիրաբերել իրենց մայրութեան
աստուած Անահիտի բազինին։ Մեր-
ժել էր, արեւելքի Վարդապետի նոր
հաւատքն էր դաւանած եղել։ Արքա-
յի գօրավարը յուշել էր, որ նա
Խոսրով հօր ապանողի որդի Գրի-
գորն է, հրամայել էր բանտարկել
նրան, հայոց արքունիքը յանցանքի
համար մահապատիճ սահմանած չէր
եղել։

Հայոց աշխարհին հոսած տիեզերական իմաստութեան ոգու հուրով յորդած Տրդատ արքան սպաննեց իրենց հին աստուածներին, այդինչպէս պատահեց, ինչու հազար, հազար տարիների հայու տոհմական հաւատքը այրեց: Հայոց Զայկագուն արքաներից չլինելու, թէ սահմանակից երկու հզօր կայսրութիւններից իր երկրի պետականութիւնը ու հայերի ինքնուրոցնութիւնը պահպանելու նկատառումներով, թէ իրենց մարդայնացած աստուածների տիեզերական բարեկալաշտ ոգու մղումն էր, որ նոր հաւատքը հոչակեց հայոց աշխարհի պաշտամունք: Քանդեցին սպաննուած աստուածների մէհեանները, այրեցին իմաստուն քուրմերի արարած դպրութեան հրայրքը: Քանդեցին իրենց հոգիներում հողի պաշտամունքի ոգին, մարեցին վահագնի կռուի ու քաջութեան հուրը: Դրացի պարսիկները երեք հարիւր տարիներ իրենց «Զքահաղաշտ»ի համար կռուեցին օտար նուածողի դէմ եւ նոյնիսկ մինչեւ այժմ էլ նրա պաշտամունքը շարունակողոններ կան:

Փլած մեհեանների վրայ իրենց
Վարդապետի արեամբ կարմրած խա-
չի նշանի հիմքով տաճարներ պատե-
ցին, իրենց լեռնաշխարհում ժայթ-
քած վարդացած քարերով խաչեր
հիւսեցին: Ծածկեցին իրենց աշ-
խարհը խաչերով, նրա ծանրութեան
տակ ննջեցին: Հայու սրտում մշուշ-
ուեց ուժի, հողի պաշտամունքի
փառաբանումը: Տաճարների սալա-
յատակներին ծունկի եկան խաչերի

առաջ, ծունկի եկան խաչին գամ-
ուած իրենց վարդապետի պատկերի
առաջ։ Հնազանդութիւն քարողե-
ցին, ներողածութիւն քարողեցին,
իրենց յօրինած երգերով պատարա-
գեցին նրան։ Եւ ծունկի եկան նուա-
ճողի հաւատարմութեան առաջ։ Նոր
հաւատքին ամենաբարեպաշտ ծուն-
կի եկած հայուն ոչ երկնքից, ոչ
գետնից, ոչ ոք վեր բարձրացրեց,
սպաննուեցին, խաչուեցին, խաչուեց
լեռնաշխարհն իրենց։ Ծունկի եկած,
երկնքից փրկութեան յոյս փոնտող
հայուն... ինչ ասել։

Անապատի դաժանութիւնը
իրենց սրտերում, նոր դաւանած
հաւատքի՝ սպաննելու, տիրելու աւա-
րարելու մըլուցքով թուրք-սելճուք-
ները հարիւր հազարներով արշա-
ւում էին արեւմուտք: Այրում էին
քաղաքակրթութիւն, երապ, ոպի, ար-
տեր, ազգիներ: Արեւելեան Հռովմէ-
ական-Բիւզանդական կայսրութիւնը
խարդաւանքով կործանել էր հայոց
պետութիւնը, արշատող լորդամների
առաջ բացուել էին արեւմուտքի
դարպանները: Ընկաւ Բիւզանդիո-
նը, թուրքի ուրուականը ծածկեց
արեւելեան Եւրոպան, մինչեւ որ
աւստրիացին իր մայրաքաղաքի պա-
տերի տակ կը ջախջախէր նրա
բանակները:

Հայն իր լեռնաշխարհում
նուաճուած ժողովուրդ եղաւ, ստրուկ
եղաւ: Իր բնօրրանում հայուն զրկել
էին կեանքի, գոյքի ու պատուի
ապահովութիւնից: Խլել էին նրա
խոնջանքով արարուած բերքը, խլել
էին նրա արարած հողը, խլել էին
նրանց մանչերը, աղջնակները, հար-
սերը: Քաջ Սպարտակ, Հոռվմի
ստրուկներին կռուի տարաւ հզօր
իշխանութեն դէմ, կռուեցին ազատ
կեանքի համար, զարկին, զարնուե-
ցին եւ մոլորակի հետ զնում են
յաւերժութիւն: Հարիւր, հարիւր
տարիներ՝ լեռնաշխարհի միլիոննա-
ւոր հայերից մի քաջ չելաւ ազա-
տազրութեան կրուի, թագաւոր հոչա-
կել էին իրենց Վարդապետին, փրկու-
թեան «Յոլոյ» էին որոնում նրա
հօրից: Հիւսիսի մի բանաստեղծ
հայուն «վախկոտ ու ստրուկ» էր
անուանել, նրա սրտում մարել էր
նախնիների տոհմական հաւատքի
ողու արթնած քաջութեան հետքը:

Ուուսի թագաւորը, արեւելքից
ու արեւմուտքից իր բանակներով
արշաւեց թուրքի վրայ, ջախջախեց
նրա բանակները, չթողեցին Բիւ-
զանդիոն մտնէին: Դաշինք կնքեցին,

պահանջեցին իրենց վերահսկողութեամբ բարեփոխումներ կատարել հայոց լեռնաշխարհում։ Դաւադիր արեւմուտք, իրենց վեհաժողովում զրկեցին ոռուսին պատերազմի իրաւունքով պարտադրուած պահանջեց եւ ով պատմութեան հեղնանք, բարեփոխումներ իրականցնելը վստահեցին թուրքին։ Եւ աշխարհում նոր հարց ծագեց «Հայկական Հարց», չարչարկուած հարց, արիւնով յեղուած հարց։

Հայոց լեռնաշխարհում, Սասնայ Դաւիթի հուրը իրենց սրտերում քաջազուններ՝ Վարժապետ Արաքօ, Աղբիւր Սերոր, Փաշա Անդրանիկ, Դժոխվ Հրայր, Կայծակ Առաքել, Դուման Նիկոլ, Ալատոտին Միսաք, Սեբաստյան Մուրատ, Համազապ, Միհրան Տաճատեան խմբեր կազմած կրուի ելան տիրակալի դէմ: Ափսոս որ Յոյնի, Սերբի, Պուլկարի նման ամբողջ երկիրը կրուի չտարան, զարկին, զարնուեցին, կրու յորձանուտում ընկան, պարտուեցին: Հզօր էր, վայրագ էր տիրակալը, չէր հանդուրժել հպատակի ազատութեան ընդգումը: Հայոց չէներում արիւն հոսեց, Սուլթանին «Կարծիր» յորջորջեցին, չեղաւ մի քաջ որ նրան իր իսկ պիղծ արիւնով կարծիր ներկէր: Սասնայ Մհեր էր էր ապառաժի դուռը պատռելու՝ մարտի դուրս գալու իր եղինա տեռած «Մեւիրայի ուժ»:


Երկիր տրրած «ՍԵԼԻՔ»ի դէմ:
Իրենց «Երիտասարդ» անուա-
նած թուրքեր, Օսմանի Հիւանդ
պետութիւնը փրկելու համար տա-
պալեցին սուլթանին, զաւթեցին իշ-
խանութիւնը: Ուրիշ ցեղից, կրօնա-
փոխ եղած, թրքացած հրէշածին
այդ ոհմակը յոցմերի Թէսալոնիկէ
քաղաքում ժողով գումարեց, որոշե-
ցին թաղել «Հայկական Հարցը»,
հայոց աշխարհի չիներում մահ ափուել
տարագրել նրանդ անապատներ:

Պատերազմ էր աշխարհութեան,
թուրքն էլ պատերազմի «բեմ» եւա։
Հայոց շներում դիմադրութեան
ուժը մարելու համար պահանջեց
հայերից իր բանակը զօրակոչուել։
Պահն էր նրանց յարմար՝ հայոց
սրբազն լեռնաշխարհութեան մարելու
լոյսը արիական հազար, հազար
տարիների մի հայկազոն ցեղի,
թրքացնել իրենց զաւթած արեւել-

ՔԸ: Գարուն էր, զարնան հեքիաթն
էր վառւումհայոց սրտերում, ծաղ-

Surp. p 19

ՀԲԸՆ Արտաւազդ Թատերախումբը կը ներկայացնէ **ԿԱՏԱԿԻ ՄԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ**



ՇԱԲԱԹ, ՄԱՅԻՍ 3, 2008, ԺԱՄԱ 8:00-ԻՆ

ՀԲԸՍ Ալեք Մանուկյան Կեղրոն - Պոյաճեան Սրահ
2495 E. Mountain Street, Pasadena

Մուտքի նույը՝ \$50.00 (Ներառեալ աղանդեր)

Տոմսեր ապահովելու համար ինքանայնել

ՀԲԸՆ ԿԵՐՊԻՆ (626) 794-7942

Ապրիլ Գրաստում (818) 243-4112 • Պերճ Գրաստում (818) 244-3830

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹԲՈԼԻ ԳԱՒԱԹԻ ՄՐՑԱԾԱՐՔ «ԱՐԱՐԱՏՆ» ՈՒ «ԲԱՆԱՆՑ»Ը ԵԶՐԱՓԱԿԻՉՈՒՄ

Ֆութբոլի Հայաստանի 2008թ. գաւաթի եզրափակիչում կրկին կը հանդիպեն Երեւանը ներկայացնող «Արարատ»ը եւ «Բանանց»ը: Այս թիմերը զաւաթը վիճարկել էին նախորդ խաղարկութեան եզրափակիչում եւս: «Արարատ» - «Փիւնիկ» կիսաեզրափակիչի պատասխան մրցավէճին «Արարատ»ը խոշոր՝ 3:0 հաշուով յաղթեց ախոյեանին (առաջին խաղում առաւելութեան էր հասել 2:1 հաշուով):

Կիսաեզրափակիչի միւս խաղում «Բանանց»ը հիւրընկալուելիս 2 անպատասխան գնդակ է ուղարկել «Միկայ»ի դարպասը: Առաջին մրցավէճում «Բանանց»ը յաղթեց էր 3:1 հաշուով:

Այսպիսով Մայիսի 9-ին իջեւանում կայանալիք Հայաստանի գաւաթի եզրափակիչում կը հանդիպեն «Արարատ»ը եւ «Բանանց»ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹԲՈԼԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Ֆութբոլի Հայաստանի առաջնութեան երրորդ առուրում ախոյեան «Փիւնիկ»ը իր առաջին պարտութիւնը կրեց՝ «Նախրի» մարզպաղացում 0:2 հաշուով գիջելով Գիւմրիի «Շիրակ»ին:

Տուրի կենտրոնական հանդիպումը կայացաւ Աբովեանում, որտեղ առաջատարներից մէկը՝ «Արարատ»ը, ընդունել էր «Բանանց»ին:

«Արարատ»ը 46-րդ րոպէին Սարգիս Մովսիսեանի խփած կողի շնորհիւ նուազագոյն հաշուով առաւելութեան հասաւ փոխախոյեանի նկատմամբ եւ շարունակում է զլիսաւորել մրցաշարային աղիւսակը: «Արարատ»ին միայն գնդակների տարբերութեամբ է զիջում «Միկան», որը այս առուրում կապանում 3:1 հաշուով առաւելութեան հասաւ տեղի «Գանձասար»ի նկատմամբ:

Իր առաջին յաղթանակը տօնեց «Ուլիս»ը, որը 3 անպատասխան գնդակ ուղարկեց «Կիլիկիայ»ի դարպասը:

«Ուլիս» - «Կիլիկիա»	3-0
«Փիւնիկ» - «Շիրակ»	0-2
«Գանձասար» - «Միկա»	1-3
«Արարատ» - «Բանանց»	1-0

3 փուլից յետոց 9-ական միաւորով եւ գնդակների տարբերութեամբ առաջատար են «Արարատ»ը եւ «Միկան»:



Խաղ	Ցար.	Հաւ.	Պարտ.	Կոլ	Կէտ
«Արարատ» Երեւան	3	3	0	0	8-0 9
«Միկա» Աշտարակ	3	3	0	0	9-2 9
«Շիրակ» Գիւմրի	3	2	0	1	5-4 6
«Փիւնիկ» Երեւան	3	2	0	1	2-2 6
«Ուլիս» Երեւան	3	1	0	2	3-3 3
«Գանձասար» Կապան	3	0	1	2	2-5 1
«Բանանց» Երեւան	3	0	1	2	0-2 1
«Կիլիկիա» Երեւան	3	0	0	3	0-11 0

ԱՊԱՔԻՆՈՒՄ

ՄԱՐԱԼ ԳԱԼՈՒՍԵԱՆԻ վիրաբուժական յաջող գործողութեան ենթարկուելու ուրախ առիթով ծնողքը՝ Տէր եւ Տիկ. Գէորգ եւ Լուսին Գալուստեան շուտափոյթ ապաքինում կը մաղթեն իրենց դատեր՝ Մարալ Գալուստեանին եւ առ այդ \$100 տոլար կը նուիրեն «Մասիս» շաբաթաթերթի ֆոնտին:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ... ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ...

ՄԵծ Ժողովրդականութիւն Վայելող
Կլինտէլի ԱՄԳԱ 280-րդ Ալիքը
Այժմ կը Սփոռուի
GlobeCast

Արբանեակային Հեռատեսիլով
Ամերիկայի, Գանատայի եւ Մեխիկոյի
Ամբողջ Տարածքին
Դուք Կրնաք Դիտել
Հայաստանեան Լուրեր
Քաղաքական Վերլուծութիւններ
Երածշտական Հաղորդումներ
Եւայլն

Մանրամասնութիւններու Համար
Հեռամայնել 818.547.9696

ԵՒՐՈՊԱՅԻ ՇԱԽՄԱՏԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ ԱՌԱՋՆԱՐ ԵՍ ՍԵՐԳԵՅ ՄՈՎՍԻՍԵԱՆԸ ԵՒ ԵՄԻԼ ՍՈՒՏՈՎԱԿԻՆ

Լեհաստանի Պլովդիվ քաղաքում անցկացուղղ Եւրոպայի շախմատի տղամարդկանց եւ կանանց առաջնութիւններում խաղացուել է 7 փուլ:

Տղամարդկանց մրցաշարում 7 հնարաւորից 6 միաւոր են վաստակել եւ մրցաշարային աղիւսակը գլխաւորում են Սերգէ Մովսիսեանը (Սլովակիա) եւ էմիլ Սուտովակին (Խորայէլ): 7 մասնակիցներ 5,5-ական միաւորով յաջորդում են առաջատարներին: Հայաստանի շախմատիստներից առաջին յաջող է հանդէս գալիս Վլադիմիր Յակոբեանը. նա մրցաշարի եւս 23 մասնակիցների հետ վաստակել է 5 միաւոր:

Կանանց պայքարում հիանալի է հանդէս գալիս կլինա Դանիէլեանը, որը այս տուրում հերթական յաղթանակը տօնեց եւ հաւասարուեց առաջատարներին: Այժմ էլինան եւս 7 շախմատիստուհիների հետ 5,5 միաւորով պատահած է մրցաշարային աղիւսակը: Յաջող է հանդէս գալիս նաև Լիլիթ Մկրտչեանը, որը 5 միաւորով եզրափակում է լաւագոյն տասնեակը:

ՓԵՖԻՆ-2008

ԵՐԿՈՒ ՈՒՂԵԳԻՐ ԱԶԱՏ ՈԲԻ ԸՄԲԻՇՆԵՐԻՆ

Հայաստանի ազատ ոճի ըմբիշ-ներին վերջապէս յաջողուեց ֆեքինում կայանալիք օլիմպիական խաղերի ուղեգիր նուածել: Շվեյցարիայում անցկացուած վարկանիշային մրցաշարում մեր ըմբիշներից երկուսը՝ Սուրեն Մարկոսեանը (66 կգ) եւ Յարութիւն ենոքեանը (84 կգ) արժանացան բրոնզէ մեղալի ու օլիմպիական ուղեգիր նուածեցին: Մեր ըմբիշները ֆեքինում մասնակիցների թիւն աւելացնելու եւս մէկ հնարաւորութիւններին կ'ունենան՝ մասնակցելով վարկանիշային վերջին մրցաշարին:



ՄԱՐԱՑԵԼ Է ՊԱՍՔԵԹՈՒԼԻ ՅԱՅՏՆԻ ՄԱՐԶԻՉ ՄԱՐՏՈՒ ՉՈԼԱԽԱՆԵԱԸ

Երկարատեւ եւ ծանր հիւանդութիւնից յետոյ 71 տարեկանում մահացել է պասքէթպոլի յայտնի մարզի Մարտուն (Ռաֆիկ) Չոլախանը: Չոլախանը հայկական պասքէթպոլի երախտաւորներից էր, որի ջանքերով ժամանակին հիմնադրուել էր Գիւմրիի «Բուրեվեստնիկ» կանանց խումբը, որը հանդէս է եկել ԽՍՀՄ առաջնութեան 1-ին խմբում: Հենց այդ խումբի բազայի վրայ էլ յետազայում կազմաւորուեց հանրայատ Աբովեանի «Հատիսը», որը բարձրագոյն խմբի ուղեգիր նուածեց: Չոլախանի գլխաւորութեամբ «Հատիսը» երկու անգամ նուածել է ԽՍՀՄ գաւաթը, դարձել է բրոնզէ բրոնզէ մրցանակակիր, մասնակցել է Եւրոպայի գաւաթի խաղարկութեանը, որտեղ ընդգրկուել է 8 լաւագոյն խումբերի ցանկում:

Մեծ է Չոլախանի աւանդը Հայաստանում պատքէթպոլի գարգացման գործում, քանի որ նրա պատրաստած կաղը բրունա պարբերաբար համալրում էին Հայաստանի հաւաքականները: Անուանի մարզի սաներից է նաև 1992-ի Բարսելոնի օլիմպիադայի ախոյեանուհի էլեն Բունիթեանցը, որը նման յաջողութեան է հասել ԱՊՀ հաւաքականի կազմում: Խակ մինչ այդ Չոլախանի գլխաւորութեամբ ԽՍՀՄ պատանեկան հաւաքականը դարձել էր Եւրոպայի ախոյեան: Յաւոք, վերջին 5 տարիներին ծանր հիւանդութեան պատճառով ՀՀ վաստակաւոր մարզիչը զրկուած էր մարզական գործունէութիւն ծաւալելու հարաւորութիւնից:

ԿՈՉ ՕԳՆՈՒԹԵԱՆ



Ես ԿԱՐՈ ԹՈՒԳԱՄԵԼԵԱՆ, 64 տարեկան, ամիսներէ ի վեր կը տառապիմ Լեւկեմիա-է (արեան բաղցկեղ): Յաղթելու համար այս հիւանդութեան, պէտք ունիմ որոշ տեսակի՝ ինծի յարմարող արիւնի: Եթէ յարմարող արիւնը գտնուի, տուող ենթական ոչ մէկ վտանգ կամ դժուարութիւն պիտի չունենայ: Պարզապէս՝ յատուկ գործողութեամբ մը, մէկ թեւէն առնուած արիւնը, միւս թեւէն իրեն ետ պիտի ներարկուի: 18 տարեկանէն վար եղողները չեն կրնար օգնել ինծի: Կրնաք ինծի հեռախօսել հետեւեալ թիւով՝ (818) 415-4661: Հանեցէ օգնել ինծի, այլապէս կրնայ շատ ուշ ըլլալ:

Կանխայայտ շնորհակալութեամբ՝


ԿԱՐՈ ԹՈՒԳԱՄԵԼԵԱՆ



AGBU



LARK MUSICAL SOCIETY



A New Production by

**AGBU ARDAVAZT THEATER COMPANY
AND
LARK MUSICAL SOCIETY**

Dikran Tchouhadjian
ZEMIRÉ

Opera Semiseria in Four Acts

Stage Director:
KRIKOR SATAMIAN

Music Director:
VATSCHE BARSOUMIAN

A large cast of singers, actors, chorus,
orchestra and supernumeraries.

Friday
May 30, 2008, 8:00 pm
Saturday
May 31, 2008, 8:00 pm
Sunday
June 1, 2008, 3:30 pm

Pasadena Civic Auditorium
300 East Green Street
Pasadena, CA

Zemiré

Չ Ե Ս Ի Ռ Ե

